Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1974

84
L-24

2903

2011

ՅՈՒԵԼՈՒՄԾ

458

84-
Զ-24
Ակ

ԲԱԺԱԿ

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՎԷՊ

Գործ Տիկին Ժորժ Սանդի

Ա.

38967

Իշխանազն մանուկը կամեցաւ զբօսնել բարձր սարի վրայ, և դաստիարակը հետևեցաւ նորան։ Մանուկը կամեցաւ մօտից տեսնել գեղեցիկ ձիւնն ու մեծ մեծ սառոյցները որ երբէք չէն հալվում, և դաստիարակը չըհամարձակեցաւ ընդդիմանալ նորան։ Մանուկը իւր շան հետ խաղաց բերանաբաց սառցակոյտի ափին. նորա ոտը սահեցաւ աղաղակեց ու անյայտացաւ, և դաստիարակը չհամարձակեցաւ ետևիցն ընկնել։ Իսկ շունը թռաւ անդունդը երեխային փրկելու համար, և նա էլ անյայտացաւ։

—

Մի քանի բոպէ հաչող շան ու աղաղակող երեխայի ձայները լսվում էին։ Քանի գնում՝ աղաղակը լռնում խեղդվում էր անծանօթ խորութեան մէջ, և վերջապէս էլ ոչինչ ձայն չէր գալիս. անդունդը լռել էր։ Այն ժամանակ իշխանի սպասաւորները և սարի հովիւները փորձեցին չուաններով իջնել անդունդը. բայց նոքա միայն մի մութ ճեղք տեսան, որ այնքան խորն էր՝ որ կարծես վերջ չունէր և նորա կողերը որքան իջնում էին, այնքան աւելի զառիվայր էին։

—

Զուր էին նոքա իրանց կեանքը վտանգի մէջ դրել, ուստի գնացին ամէն բան տեղովը պատմեցին իշխանին։ Իշխանը կախել տուեց նոցա, որովհետև իրանց անհոգութեամբ իւր որդու կորստեան պատճառ էին եղել։ Գլխատեցին նոյնպէս քսանից աւելի ազնուականներ որ կարող էին աչք ունենալ տէրութեան թագի վրայ և անչուշտ դաշինք էին կապել սարի ոգիների հետ ժառանգին սպանել տալու համար։ Իսկ պարոն Բօնուս դաստիարակի մասին ամէն տեղ հրատարակած էր որ եթէ բռնուի, սաստիկ անջանքներով պիտի այրուի. այս պատճառով նա փախաւ անհետքոյթ եղաւ։

—

Մանուկը շատ վախեցաւ ու մրսեցաւ սառնեղէն անդնդում։ Շունը չկարողացաւ պահել նորան որ չսահի մինչև ամենախոր յատակը. բայց շարունակ գօտիից բռնելով՝ չթոյլ տուեց որ արագութեամբ սահի և սառոյցներին խփուի։ Զնայելով որ մանուկը իւր ծանրութեամբ ձգում տանում էր նորան, այնու ամենայնիւ նա այնքան դիմացաւ մինչև որ թաթերը արիւնոտեցան և եղունգները համարեա թափթփեցան։ Սակայն նա պինդ բռնում էր, և երբ նոքա վերջապէս գտան մի խորշ ուր կարողացան դադարել, շունը իւր մարմնով ծածկեց ու տաքացրեց երեխային։

—

Եւ երկուսն էլ այնքան յոգնած էին որ քնեցան։ Երբ զարթեցան, առաջները մի կին տեսան, այնպէս նաղելի ու դեղեցիկ որ չիմացան թէ մինչ էակ է։ Նորա հագուստը ձիւնի պէս սպիտակ էր, երկար ոսկեթել մազերը բոցի պէս փայլում էին ուսերի վրայ։ Ժպտալով նայում էր նա երեխայի երեսին, բայց չխօսեցաւ նորա հետ, այլ ձեռքից բռնելով դուրս հանեց նորան սառցակոյտից և տարաւ մի մեծ ու վայրենի հովիտ ուր շունը կաղկաղ հետևեցաւ նոցա։

—

Այս հովիտը, որ ծածկուած է լեռների հեռաւոր խորշում, անծանօթ է մարդկանց։ Բարձր գրանիտէ սարեր և անանցանելի սառցակոյտեր ամէն կողմից պաշտպանում են նորան։ Զարհուրելի և միանգամայն զուարճալի է այս տեղը, ինչպէս որ վայելում է նորա մէջ բնակող էակներին։ Նորա կողերի վրայ ապաստան են գտել արծիւները, արջերն ու լեռնայծերը։ Հովտի ամենախոր տեղում թագաւորում է տաքութիւնը և ծաղկում է ամենագեղեցիկ բոյսեր. այն տեղ վհուկները հաստատել էին իրանց բնակարանը, և մատաղահաս Զիլլան իւր քոյրերի մօտ էր տանում սառցակոյտի կողերի վրայ գտած երեխային։

—

Երբ մանուկը նշմարեց որ արջերը անցնում են մօտովը, սաստիկ վախեցաւ, շունն էլ ահիցը դողում, մռմռում էր. բայց վհուկը ժպտաց, և վայրենի անասունները փոխեցին իրանց ճանապարհը։ Մանուկը վհուկներին տեսաւ թէ չէ, ցանկացաւ ծիծաղել ու խօսել. բայց նոքա այնպիսի բոցափայլ աչքերով նայեցան երեխայի վրայ որ նա սկսաւ լալ։ Այն ժամանակ Զիլլան գրկեց նորան, ճակատին մի համբոյր տուեց, և վհուկները զայրացան, և ամէնից պառաւը ասաց նորան սպառնալով.

—

«Այդ քո արածը մեծ ամօթ է. իւր անձը յարգող վհուկը երբէք մի մանուկ չէ գգուել։ Վհուկի համբոյրները պատկանում են տատրակներին, մատաղ ուլերին, ծաղիկներին, շնորհալի ու անմեղ արարածներին, իսկ այդ անմաքուր ու չարագործ կենդանին որ բերել ես այստեղ պղծում է քո շրթունքները։ Մենք չենք ընդունում դորան, հեռու մեզանից և այդ շունը.

դա մարդու բարեկամն է, նորա կործանիչ ձգտումները և յափշտակիչ սովորութիւնները ունի. յետ տար այս արարածները որտեղից բերել ես նոցա։

—

Զիլլան պատասխանեց պառաւ Տրօլլիային. «Դու այնքան հպարտ ու չարասիրտ ես որ իբրև թէ իժից կամ անդղից ծնած լինէիր։ Չես յիշում որ վհուկ լինելուց առաջ կին ես եղել, և միթէ ներելի է քեզ ատել ու արմարհել այն ցեղը որից առաջ ես դալիս։ Երբ, մեր հին աստուածների վերջին սեղանների վրայ, խմել ես այն դիւթական ըմպելիքը որ մեզ անմահութիւն չնորհեց, չես երդուել մարդկանց գերդաստանները պաշտպանել և նոցա սերունդների վրայ հսկել։»

—

«Այո, վրայ բերեց Տրօլլիան, ես էլ քեզ պէս երդուել եմ մեր հայրերի գիտութիւնը մարդկային սերունդների երջանկութեանը նուիրել. բայց մարդիկ ազատել են մեզ մեր երդումից։ Ի՞նչպէս վարուեցան նոքա մեզ հետ։ Նոքա նոր աստուածներ պաշտեցին և մեզ կախարդ ու դև անուանեցին։ Նոքա հալածեցին մեզ մեր սրբազան տեղերից, և կործանելով մեր նուիրական օթևանները, ուրանալով մեր օրէնքները և ծաղր անելով մեր գաղտնիքները, խորտակեցին այն կապերը որ պինդ կապում էին մեզ իրանց անիծեալ ցեղի հետ։

—

«Իսկ ես, ԷՊԷ երբէք զղջացել եմ որ դիւթական ըմպելիքով ազատուեցայ մահուան իշխանութիւնից, պատճառն այն է որ էլ չէի կարող ուղած ժամանակս մարդկանց վրայ մահ բերել։ Կար ժամանակ երբ գիտութեան չնորհքով՝ կարող էինք խաղալ մահուան հետ, չտապեցնել նորան կամ յետաձգել։ Այսուհետև նա պրծնում է մեր ձեռից և ծիծաղում մեզ վրայ։ Մեր վրայ իշխող անողոքելի կեանքը դատապարտում է մեզ յարգել նոյն իսկ կեանքը։ Մեզ համար մի մեծ բարիք է որ էլ հարկադրուած չենք սպանութիւն գործել ապրելու համար. բայց և մեծ չարիք նոյնպէս որ ստիպուած ենք կենդանի թողնել այն արարածներին որոնց ցանկալի կը լինէր մեռած տեսնել։»

—

Այս անողորմ բառերը արտասանելուց յետոյ, պառաւ կախարդը ձեռը բարձրացրեց երեխային խփելու համար. բայց նորա բազուկը թուլացած վայր ընկաւ. շունը յարձակեցաւ նորա վրայ և պատառոտեց նորա հագուստը, որի վրայ նշմարվում էին դեռևս առաջուան զոհերի ժամանակ թափած մարդկային արիւնի հետքերը։ Մանուկը, որ պառաւի խօսքերը չէր հասկացել, բայց տեսել էր նորա սոսկալի շարժուածքը, ապաւինեցաւ հեզաբարոյ Զիլլայի գիրկը, և բոլոր մատաղահաս վհուկները ծիծաղեցան կախարդի կատաղութեան և շան յանդգնութեան վրայ։

—

Պառաւները յանդիմանեցին ու նախատեցին երիտասարդուհիներին, և

այնքան խօսքեր ասուեցան որ արջերն անդամ մռմռում էին իրանց որջերում։ Եւ այնքան աղաղակ ու սպառնալիք, ծիծաղ ու ծաղրածութիւն և անէծք բարձրացաւ օդը, որ ամենաբարձր կատարները իրանց ձիւնէ պսակները թօթափեցին հովի ծառերի վրայ։ Այն ժամանակ երևեցաւ թագուհին, և լռութիւնը տիրեց, որովհետև վհուկների թագուհին կարող է, ինչպէս ասում են, խօսելու կարողութիւնը խլել նորանից՝ որ դէպի չարն գործ է ածում այդ ձիրքը, և վհուկների համար այդ ընդունակութիւնից զրկուիլը ամենամեծ պատիժ է համարվում։

—

Թագուհին երիտասարդ է ինչպէս այն օրը երբ անմահութեան բաժակը խմեց, որովհետև, անմահութիւնը ձեռք բերելուց յետոյ, վհուկները ոչինչ փոփոխութեան չենթարկուեցան, ոչ ծերացան և ոչ երիտասարդացան, այլ բոլորը նոյն հասակը պահպանեցին որի մէջ գտնվում էին այն գերագոյն րոպէին։ Ահա այս պատճառով երիտասարդ վհուկները միշտ անհանգիստ ու զուարթ են, միջահասակները միշտ ծանրաբարոյ ու մելամաղձոտ են, պառաւները միշտ զառամած ու տխուր։ Թագուհին բարձրահասակ է զուարթաղէմ, նա ամէն վհուկներից ուժեղ, գեղեցիկ, հեզ ու իմաստուն է. միևնոյն ժամանակ նա ամէնից գիտնականն է. նա էր հնարել անմահութեան բաժակի մեծ գաղտնիքը։

—

«Տրօլլիա, ասաց նա, քո բարկութիւնը անօգուտ է։ Մարդիկ ինչ որ արժեն՝ և ինչոր են՝ ատելը իմաստութեան հակառակ բան է։ Իսկ քո կողմից, Զիլլա, խելագարութիւն էր այդ երեխային այստեղ բերել։ Ի՞նչպէս պիտի մեծացնես դորան. չես իմանում որ դա մարդկանց սովորութեամբ պիտի ապրի և ուտի։ Եւ միթէ թոյլ պիտի տաս դորան սպանել կենդանիները կամ նոցա ձուն, կաթն ու մեղրը յափշտակել, կամ միայն այն բոյսերը որ նոցա մնունդը մատակարարում են։ Չես տեսնում որ դորանով մահ ես բերում մեր օթևանը։

—

—Թագուհի, պատասխանեց երիտասարդ վհուկը, մահը չէ թագաւորում այստեղ ինչպէս և ուրիշ տեղեր. կամ կարողացել ենք հեռացնել նորան մեր աչքերից։ Դիցուք թէ վհուկները մահ չեն պատճառում, թէ ծաղիկների անուշահոտութիւնը բաւական է նոցա կերակրելու, թէ նոցա թեթեղենթաց քայլերը մի միջատ անդամ չեն ջախջախում, նոցա եթերական շունչը կենդանի բնութիւնից մի հիւղէ անդամ չէ կուլ տալիս, բայց մթթէ կենդանիները չեն կոտորում, չեն ուտում միմանց։ Ի՞նչ փոյթ եթէ այս արարածների միջում որոնց կեանքը կործանման մէջ մնունդ է գտնում, երկուսը աւելի լինին։

—

—Շունը դեռ ոչինչ, ասաց թագուհին. բայց մանուկը ցաւ ու մահ կը բերէ այստեղ. դիտմամբ սպանութիւններ կը գործէ, զարհուրելի տեսարաններ ցոյց կը տայ մեզ, կը նորոգէ սպանութեան և ատելութեան մրտքերը որ թագաւորում են մեզանից ոմանց մէջ, և մի այդպիսի արարածի ներկայութիւնը որ մեզ նման է, բայց այնպիսի գործողութիւններ կը կատարէ որ մեր աչքին զզուելի են, կը վրդովէ մեր անարատ երազները։ Եթէ դու պահում ես դորան, Զիլլա, աշխատէ մեղմացնել դորա զարհուրելի բնութիւնը, ապա թէ ոչ, կը ստիպեմ տանել կորցնել դորան ձիւների մէջ, ուր մահուան զոհ կը դառնայ»։

—

Եւ ոչինչ չասաց թագուհին, որովհետև նա սովորութիւն չունի պատուիրելու, այլ միայն խորհուրդներ է տալիս։ Նա հեռացաւ և վհուկները ցրուեցան։ Միայն մի քանիսը մնացին Զիլլաի մօտ և հարցրին նորան. «Ի՞նչ պիտի անես այդ երեխայով. ճշմարիտ է, գեղեցիկ է, բայց չես կարող սիրել նորան։ Այն օրից որ նուիրեցիր քեզ անարատ կուսութեան, դու չես ճանաչել ոչ ամուսին ոչ ընտանիք, ոչ մի յիշատակ քո մահկանացու կեանքից չէ թողել քեզ մայրութեան ստրջանքն ու երազները։ Բայց ինչ որ էլ լինի, անմահութիւնը ազատում է մեզ այդ թուլութիւններից և ով որ միանգամ խմել է բաժակից, սէրը մոռացութեան է տուել։

—

Ճշմարիտ է, ասաց Զիլլան, բայց իմ երազը այս երեխայի մասին ոչինչ նմանութիւն չունի մարդկային կեանքի երազների հետ, սա ինձ համար ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ մի հետաքրքրութեան առարկայ, և զարմանում եմ որ ձեզ ոչինչ զուարճութիւն չէ պատճառում։ Դարեր անցան քանի որ ամենայն բարեկամութեան կապ կտրեցինք մարդկային ցեղի հետ, և այժմ մենք նորան իւր գործերից ենք ճանաչում։ Լաւ գիտենք որ առաջուանից աւելի ճարտար ու գիտուն է, նորա աշխատութիւններն ու գիտերը զարմացնում են մեզ. բայց թէ արդեօք բնութեամբ էլ կատարելագործուած է և կամ իւր չար ձգտումները թողած է, այդ մեզ բոլորովին անյայտ է։

—

—Եւ դու կամենում ես տեսնել թէ ինչ կը դառնայ մարդկանց զաւակը, հեռու իւր նմաններից և ինքն իրան թողած, կամ քեզանով կրթուած բարձր գիտութեան մէջ։ Փորձէ, մենք կ՝օգնենք քեզ առաջնորդելու կամ գտնելու նորան։ Միայն յիշէ որ նա թոյլ է և դեռ ևս չար չէ։ Քեզ պէտք կը լինի աւելի խնամք տանել դորա վրայ քան բնումը նստող թռչնի վրայ, այնպէս որ մեծ հոգսի մէջ ես ձգել քո անձը, Զիլլա։ Դու ի բնէ սիրելի ու հեզ ես, բայց աւելի բոպէական հաճոյքներ ունիս քան թէ հաստատ կամք. չուտով կը ձանձրանաս այդ բեռից, և գուցէ աւելի լաւ կ՝անէիր եթէ ամենևին չչալակէիր դորան։»

—

Նախանձն էր այսպէս խօսեցնում, որովհետև մանուկը դուր էր եկել նոցա, և շատերը կը կամենային ունենալ նորան։ Վհուկների սէրը սրտից չէ բղխում, բայց նոցա միտքը ցանկութեամբ ու հետաքրքրութեամբ լի է։

Նոքա ձանձրանում են, և ինչ որ մարդկանց աչխարհից գալիս է, ուր չեն համարձակում արձակ համարձակ մտնել, խառվում ու ապչեցնում է նոցա։ Մի թանգագին զարդ, մի ընտանի անասուն, մի ժամացոյց, մի հայելի, բոլորը ինչ որ նոքա չեն կարող չինել՝ գրաւում, զբաղեցնում է նոցա միտքը, թէև այդ բոլոր առարկաները անպէտք են նոցա համար։

—

Նոքա արհամարհելով արհամարհում են մարդկութիւնը, բայց չեն կարող չարունակ չմտածել և չխօսել մարդկանց վրայ։ Մանուկը չուր էր տուել գլուխը վհուկներից։ Նոցանից մի քանիսը ցանկանում էին նոյնպէս չունը վեր առնել. բայց Զիլլան աչալրջութեամբ հսկում էր իւր կալանաւորների վրայ, և տեսնելով որ ամէնքը աչք ունին նոցա վրայ, վերցրեց տարաւ նոցա վհուկների օթեանի մի հեռաւոր քարայրը և ցոյց տուեց երեխային անտառների սահմանը որից չպէտք է անցնէր նա առանց իւր թոյլտուութեան։ Մանուկն արտասվում էր ասելով. «Քաղցած եմ։» Եւ երբ Զիլլան ուտելու բան տուեց նորան, տեսնելով որ հեռանում է իրանից, ասաց. «վախենում եմ։»

—

Զիլլան, որ զարմացել էր երեխայի չատակերութեան վրայ, ոչ պակաս զարմացաւ և նորա վախկոտութեան վրայ, և չկամենալով մի մահկանացու էակի գերի դառնալ, ցոյց տուեց նորան այն տեղերը ուր այծերը կերակրում էին իրանց ուլերը, ուր մեղուները պահում էին իրանց փեթակները, ուր վայրի բաղերն ու կարապները ծածկում էին իրանց ձուաները, և ասաց. «Այսուհետև ինքդ որոնէ քո կերակուրը։ Միայն զգուշութեամբ գնալով չլինի թէ կենդանիները քեզ տեսնեն, ապա թէ ոչ նոքա իրանց աներկիւղութիւնն ու միամտութիւնը կը կորցնեն, և պառաւ վհուկները չեն կամենում որ իրանց կեանքի սովորութիւնները խանգարուին։ «Իշխանաղն մանուկը չատ զարմացաւ երբ իմացաւ որ ինքը անձամբ պիտի որոնէ իւր սնունդը, այն էլ այդպիսի աղքատ սնունդ։ Նա փնթփնթաց ու լաց եղաւ, բայց վհուկը ոչինչ ուշադրութիւն չդարձրեց։

—

Նա ուշադրութիւն չդարձրեց, որովհետև երազի պէս էր յիշում իւր մանկութեան արտասուքները, այս պատճառով երեխայի ցաւն ու լացը չէր գնահատում։ Նա թողեց ու գնաց վհուկների զիշերաժողովը։ Միւս օրը մանուկը քաղցեցաւ, բայց էլ չփնթփնթաց։ Շունը, որ երբէք չէր փնթփնթում, բռնեց ու լափեց մի նապաստակ։ Երեք օրից յետոյ, մանուկը մտածեց թէ կարող էր հնչտութեամբ չոր փայտ հաւաքել, կրակ վառել ու խորովել իւր չան բռնած որսը, բայց որովհետև ծոյլ էր, բաւականացաւ անտառի մատակարարած կերակուրներով որոնք չատ համով էին թվում նորան։

—

Մի քանի օր էլ անցաւ, և նա մոռացաւ որ մարդիկ կենդանիների միսը խորովում ու եփում են, և տեսնելով որ իւր շունը այնպիսի ախորժակով է ուտում հում միսը, ինքն էլ փորձեց և լաւ կշտացաւ։ Երբ Զիլլան գիշերաժողովից վերադարձաւ, երեխային ուրախ ու զուարթ գտաւ, բայց վայրենի ու կեղտոտ։ Նորա ատամները սպիտակ էին և ձեռները արիւնոտ, հայեացքը մռայլ ու կատաղի. նա համարեա թէ մոռացել էր խօսել. զուր աչխատելով իմանալ թէ ուր է և ինչի յանկարծ իւր վիճակը փոխուել է, նա վերջապէս այն կէտին հասաւ որ միայն ուտելու ու քնելու վրայ էր մտածում։

—

Շունը ընդհակառակն մաքուր էր և զիւրամատչելի. նորա հասկացողութիւնը կարծես աճել էր անձնազոհութեան մէջ։ Զիլլան մի բոպէ ցանկացաւ երեխային թողնել և շունը հետը տանել։ Բայց յետոյ մտաբերեց փոքր ինչ անցեալը և վճռեց կրթել երեխային իւր հասկացողութեան համեմատ. բայց պէտք էր վերջապէս խօսել նորան հետ, և վհուկը չէր իմանում թէ ինչ ասէ նորան։ Զիլլան լաւ էր իմանում նրա լեզուն, գիտութիւնից էլ զուրկ չէր. դժուարութիւնը նորանումն էր որ չգիտէր թէ ինչ հնարներով թողնել տայ նորան իւր սովորութիւնները։

—

Նա իւր փորձն այսպէս սկսեց. «Միտդ բեր, ասաց նա երեխային, որ դու ինձանից ստոր ցեղի ես պատկանում»։ Մանուկը յիշեց թէ ինչ էր իւր հօր տանը և պատասխանեց վհուկին. «Մի թէ դու կայսրուհի ես, որովհետև ես իշխան եմ»։ Ասաց Զիլլան. «Ես կամենում եմ քեզ երկրի բոլոր թագաւորներից բարձրացնել»։ Մանուկը պատասխանեց. «Ցար ինձ մօտ որ որոնում էինք»։ Վհուկը կրկնեց. «Այսուհետև մուռացիր մօրդ և միայն ինձ հնազանդիր»։ Մանուկը վախեցաւ և էլ ոչինչ չասաց։ Ես կամենում եմ երջանկացնել ու իմաստնացնել քեզ, ասաց վհուկը, և մարդկային բնութիւնից բարձր»։ Մանուկը ոչինչ չհասկացաւ։

—

Վհուկը ուրիշ բան փորձեց։ Նա ասաց երեխային, «Սիրում էիր մօրդ։ —Այո, պատասխանեց մանուկը։— Կամենում ես ինձ մօրդ պէս սիրել։— Այո, եթէ դու էլ ինձ կը սիրես։—Այդ ինչ ես պահանջում ինձանից, ասաց վհուկը ժպտալով երեխայի յանդգնութեան վրայ։ Ես քեզ սառցակոյտից հանեցի ուր անշուշտ մեռած կը լինէիր. պաչտպանեցի քո անձը պառաւ վհուկների դէմ որոնք ատելով ատում են քեզ, և թաքցրի այստեղ ուր նոքա այլևս քեզ վրայ չեն մտածում։ Ես քեզ մի համբոյր տուի, թէև դու իմ նմանը չես։ Մի թէ այդ բաւական չէ, և մայրդ աւելի բան կ'անէր քեզ համար։— Այո, պատասխանեց մանուկը, նա ինձ ամէն օր էր համբուրում»։

—

Վհուկը զրկեց երեխային, որ նոյնպէս համբուրեց նորան՝ ասելով. «Ինչպէս սառն են շրթունքներդ»։ Վհուկները սիրում են տղայաբար խաղալ. ինչպէս այն անտարբեր մարդիկը որոնք ամէն կրքից զուրկ են։ Զիլ-

լան փորձեց վարժեցնել երեխային արագ վազել ու թռչկոտել։ Մանուկը արագաշարժ ու համարձակ էր, և սկզբումը մեծ զուարճութիւն էր զգում թռչկոտել վհուկի հետ. բայց շուտով զարմանալի բաներ տեսաւ։ Վհուկը սլաքի արագութեամբ թռչում էր, նորա նուրբ ոտները յոգնածութիւն ասած բանը չդիտէին թէ ինչ է, և մանուկը չէր կարողանում ետևիցը հասնել։

—

Վհուկը երեխային յորդորելով որ իւր հետ թռչկոտի, կամեցաւ, մի օրինակ տալու համար, վազելով թռչել ժայռերի մի պատառուացքի վրայով. բայց չափազանց ուժեղ ու ապահով լինելով որ եթէ վայր ընկնի ոչընչով չի վնասուիլ, նա այնքան բարձր ու հեռու թռաւ որ մանուկը զարհուրելով փախաւ թաքկացաւ մի թփի տակ։ Այն ժամանակ վհուկը կամեցաւ վարժեցնել նորան լող տալու, բայց մանուկը վախեցաւ ջրից և մի մակոյկ պահանջեց։ Այս բանը վհուկի ծիծաղը չարժեց, և երեխան տեսնելով որ ծաղր է անում, արհամարհում է իրան և իրանից շատ ստոր է համարում, ասաց թէ չէ կամենում նորան մօր տեղ ընդունել։

—

Մանուկը շատ թոյլ ու վախկոտ երևցաւ Զիլլային։ Մի քանի օր վհուկը մոռացութեան տուաւ նորան. բայց որովհետև ընկերները հարցնում էին նորան թէ ինչ է դառել մանուկը և մեղադրում էին թէ մի բոպէական հաճոյքի անձնատուր լինելով՝ բերել էր նորան և յետոյ անխնամ թողել էր որ մի անկիւնում մեռնի, այս պատճառով շտապեցաւ դալ երեխայի մօտ և ցոյց տուեց նոցա որ ողջ ու առողջ ու անվնաս է։ «Լաւ է ասաց թագուհին, որովհետև դա ինքը կարող է իւր գլխի ճարը տեսնել առանց շատ նեղութիւն պատճառելու. համաձայնում եմ որ մնայ այստեղ և միւս կենդանիների պէս ապրի, որովհետև ինչպէս տեսնում եմ դորանից ուրիշ աւելի լաւ բան չես կարող դուրս բերել։

—

Զիլլան հասկացաւ թէ իմաստուն ու բարի թագուհին յանդիմանում էր նորան, և նորա ինքնասիրութիւնը վիրաւորուեցաւ։ Այնուհետև ամէն օր գալիս էր երեխային տեսնելու, քնքշարար խօսում էր նորա հետ, զգվում էր նորան, առանձին խնամքով սովորեցնում էր նորան խաղալ խնայելով նորա ոյժերը և ամէն ջանք գործ էր դնում քաջասրտութեան ոգին արմատացնել նորա մէջ։ Նոյնպէս վարժեցրեց երեխային կերակրուել առանց արիւն թափելու, և տեսաւ որ կարելի է կրթել նորան, որովհետև մնակ մնալով ձանձրանում էր նա, և վհուկին իւր մօտ պահելու համար՝ հնազանդում էր նորա բոլոր ասածներին, և մինչև անգամ իւր չնորհալի փաղաքշանքներով վհուկի անձնասիրութիւնը փայփայում էր։

—

Սակայն ձմեռը մօտենում էր, և թէպէտ մանուկը այդ բանի վրայ չէր մտածում, թէև նա խաղում էր ձիւնով որ համարեա ծածկում էր իւր

քարայրը, բայց ջունը սկսում էր ոռնալ ու հաջել անդգայ ձիւնի վրայ որ քանի գնում աճում էր։ Զիլլան տեսաւ որ պէտք էր երեխային այդ տեղից դուրս բերել, ապա թէ ոչ մի օր էլ նորան մեռած կը գտնէր։ Վհուկը տարաւ նորան հովտի ամենախոր տեղը, և խնդրեց իւր ընկերուհիներին որ օգնեն իրան մի տուն կառուցանելու երեխայի համար, որովհետև սխալ է այն կարծիքը թէ վհուկները կախարդական գաւազանով կարողանում են ամէն բան անել։

—

Նոքա միայն այն գիտեն անել ինչ որ իրանց հարկաւոր է, և մարդկային բնակարանը նոցա աչքին բոլորովին աւելորդ է համարվում։ Նոքա ոչ չափազանց շոգում են, ոչ էլ շատ մրսում են. ձմեռը ամառուանից փոքր ինչ աւելի թռչկոտում, պար են գալիս, և նոցա մարմինն ու միտքը երբէք չէ յոգնում։ Նոքա միենոյն բաւականութեամբ վազվզում են սառուցի և կանաչի վրայ, և եթէ կամենան յունվարին ապրիլի մեղմ տաքութիւնը զգալ, պարկում են ձիւնէ քարայրերում ուր արջերը կուչ են գալիս ձմեռը, և քնում են այնտեղ հաճելի երազներ տեսնելու համար, որովհետև վհուկները շատ քիչ են զգում քնելու կարիքը։

—

Զիլլան չէր համարձակվում մանուկը յանձնել արջերին, որոնք թէև չար չէին, բայց շարունակ հոտոտելով ու լիզկով երեխային՝ կարող էին համեղ պատառ համարել նորան։ Մատաղահաս վհուկները որոնք հրաւիրուեցան երեխայի համար բնակարան չինելու, ծիծաղելով ու խառնաչփոթ աղաղակներով գործին ձեռք զարկին։ Նոքա կամենում էին մի այնպիսի չէնք կառուցանել որ բոլոր մարդկային պալատներից գեղեցիկ լինի և ոչնչով չնմանի նոցա չնչին հնարագիտութիւններին։ Թագուհին լռիկ մնջիկ նստած նայում էր նոցա վրայ։

—

Մինը կամենում էր որ բնակարանը շատ մեծ լինի, միւսը շատ փոքր. մինը ցանկանում էր որ դնդաձև լինի, միւսը՝ սրածայր. մէկն ուզում էր որ միայն թանկագին քարեր գործածուին, միւսը՝ որ ուղտափուշի սերմիկների խաւով չինուի. մէկը կամենում էր որ բոյնի պէս բաց լինի, միւսը՝ որ որջի պէս գետնումը խրուած լինի։ Մինը ոստեր էր բերում, միւսը աւազ, մէկը ձիւն, միւսը վարդի տերևներ, միւսն էլ մանր խիճեր. իսկ մեծ մասը միայն խօսքեր էին բերում։

—

Թագուհին տեսաւ որ վհուկները չեն կարող համաձայնիլ միմեանց մէջ և թէ այդպէսով տան չինութիւնը երբէք չի սկսուիլ, նա կանչեց երեխային ու ասաց նորան. «Միթէ չես կարող ինքդ քեզ համար տուն չինել, այդ մարդու գործ է։» Մանուկը փորձեց. նա տեսել էր թէ ինչպէս են տուն չինում։ Ամենից առաջ քարեր ժողովեց, յետոյ կաւն ու մամուռը իրար հետ խառնելով շաղախեց, քառակուսի պատեր բարձրացրեց և սենեակներ բա-

ժանեց. ապա խաչաձև ոստեր դրեց ու նոցա վրայ եղէգնէ կտուր չինեց. տան մէջ այստեղ ու այնտեղ դրած մի քանի քարեր և մի անկիւնում վայրի ձարխոտից չինած սնկողինը կազմում էին երեխայի բոլոր կահ կարասիքը։

—

Վհուկները նախ հիացան երեխայի սրամտութեան ու ճարտարութեան վրայ, բայց յետոյ սկսան ծաղր անել նորան, ասելով թէ մեղուները կաստօրներն ու մրջիւնները աւելի լաւ են աշխատում։ Թագուհին յանդիմանեց նոցա. «Դուք սխալվում էք, ասաց նա. այն կենդանիները որոնք հարկադրուած են ընկերութեամբ ապրիլ այնքան հանճար չունին որքան նոքա որոնք մենակ են ապրում։ Մեղուն մեռնում է երբ իւր փեթակը չէ կարող գտնել, կաստօրների մոլորուած խումբը մոռանում է կառուցանելու արուեստը և բաւականանում է կոպիտ բնակարաններով։ Այն աշխարհում ոչ ոք առանձին գոյութիւն չունի, երբէք ։» բառը չէ արտաբերվում այնտեղ։

—

Այն էակները որոնք մի խորհրդաւոր աւանդութեամբ են ապրում, որ միշտ ընդհանուրից իւրաքանչիւրին է հաղորդում, և երբէք մի փոփոխութեան չէ ենթարկվում, ստոր են ամենաչնչին ու ամենազուրկ էակից որի միտքը անդադար նոր նոր բաներ է որոնում և իւր պիտոյքներին յարմարեցնում։ Ահա այս պատճառով մարդը, մեր նախնին, կենդանիների մէջ առաջինն է, և նորա աշխատանքը բազմակողմանի ու փոփոխական լինելով ամենից գեղեցիկն է։ Ցնսէք ինչ կարող է անել նա լոկ յիշողութեամբ, ինչեր է հնարում փորձառութեամբ, և ինչպէս գիտէ իւր գործածութեան համար պէտք ածել ամենակոպիտ նիւթերը։

—

«—Ուրեմն մարդը, ասաց Զիլլան, աւելի լաւ ու ճարտար կը լինէր եթէ առանձնութեան մէջ ապրէր։—Ոչ, Զիլլա, նորան կամաւոր ընկերութիւն է հարկաւոր և ոչ բռնի միաբանութիւնը։ Միայնակ նա կարող է ամէն բանի դէմ մրցել, և այնտեղ ուր ուրիշ կենդանիներն ընկնում են, նա իւր հանճարով յաղթող է հանդիսանում. բայց մարդը իւր մարմնի պահպանութիւնից աւելի բարձր երջանկութեան ցանկութիւն ունի. այս պատճառով նա միշտ որոնում է իւր նմանների ընկերութիւնը որ իւր հոգու անհրաժեշտ մնունդն է և այդ ընկերակցութեան կարիքը նորա համար մի ազատութիւն է։

—

Զիլլան աշխատում էր հասկանալ թագուհու խօսքերը, որ միւս վհուկները չէին ըմբռնում։ Նոքա պահպանել էին վայրենի գաղափարներ այն ժամանակի վրայ երբ մեզ նման ապրում էին երկրի վրայ, և թէպէտ իրանց գիտութեամբ մեզանից լաւ էին ըմբռնում անհուն տիեզերքի վերանորոգութեան օրէնքները, բայց ոչինչ հակացողութիւն չունէին մարդկային ցեղի աստիճանաբար զարգացման վրայ այս փոքրիկ աշխարհում ուր նոքա ձանձրանում էին, որովհետև չէին կարող ոչինչ փոփոխութիւն անել։ Նոքա բանք կամեցել էին անփոփոխ մնալ, ուստի և նոցա միակ մխիթարութիւնն էր արհամարհել այն բոլորը որ փոփոխութեան ենթարկվում է։

—

Զիլլան մտածմունքի մէջ էր ընկել, նա վճռեց վերջապէս իւր որդեգրի բոլոր ուզածները կատարել, որպէս զի տեսնէ թէ ինչ կարող է դուրս գալ նորանից։ «Ահա տունդ պատրաստ է, ասաց նա։ Ինչով կը ցանկայիր զարդարել բնակարանդ։—Կը ցանկայի որ մայրս ինձ մօտ լինէր, ասաց մանուկը։—Ես կ'աշխատեմ բերել նորան այստեղ», ասաց վհուկը, և գիտենալով թէ շատ դժուար բաներ կարող է անել, ճանապարհ ընկաւ երեխան թագուհու պատասխանութեանը յանձնելուց յետոյ։ Նա ճանապարհ ընկաւ դէպի մարդկանց աշխարհը՝ սահելով մի սրընթաց հեղեղի վրայ։

—

Այս հեղեղը բղխում է այն սառցակոյտից ուր ընկել էր իշխանի որդին։ Նորանից ծագում է մի մեծ գետ որի աղբիւրը անծանօթ է մարդկանց։ Հեղեղը, բաժանուելով բիւրաւոր արծաթափայլ առուակների, ոռոգում, պտղաբեր է անում վհուկների հովիտը, յետոյ կրկին միանում է միապաղաղ ապառաժների միջով անցնելու համար որոնք նոցա թագաւորութեան բնական սահմանն են կազմում։ Այնտեղ հեղեղը գետ դառնալով՝ կատաղութեամբ թափվում է զարհուրելի անդունդների մէջ, մտնում ծածկում է ահագին խոռոչներ ուր լոյսն երբէք չէ թափանցում, և հետզհետէ հոսելով անծանօթ ճանապարհներով՝ հասնում է մինչև մարդկանց բնակարանը։

—

Վհուկները, որոնց համար անանցնելի տեղեր չկան, կարող են դուրս գալ իրանց օթեանից սարերի ձիւնապատ գագաթներով, սառցակոյտների կատարներով կամ ապառաժների ճեղքով. բայց նոքա աւելի լաւ են համարում գետով տարուիլ, որ իւր անդունդները գահավիժելով վհուկներին՝ ոչինչ վնաս չէ հասցնում նոցա, որովհետև փրփուրի նման թեթև են։ Մի քանի բոպէում Զիլլան մշակուած արտերի մէջ գտաւ իրան և մօտեցաւ մի հովուարնակ գիւղի, ուր տեսաւ տարօրինակ կերպով հագնուած մի մարդ, որ մի ահագին քարի վրայ բարձրացած՝ բան էր ասում ամբոխին։

—

Այս մարդն ասում էր. «Ստրուկներ և վասալներ, աղօթեցէք մեծ իշխանուհու համար ու երկիր մեռաւ, աղօթեցէք նորա որդու՝ Հէրմանի հոգու համար, որ կորել է անիծեալ լերան սառոյցների մէջ։ Ոչինչ չկարողացաւ մխիթարել դրա հոգուն, և Աստուած կանչեց նորան իւր մօտ։ Դուքսը ուղարկում է ձեզ իւր ողորմութիւնը որպէս զի երկուսի համար էլ աղօթէք։» Եւ մունետիկը չաղ էր տալիս ոսկին ու արծաթը հովիւներին ու փայտահատներին, որոնք ձեռքէ ձեռք խլում էին այդ ազնիւ մետաղները, և փառք էին տալիս Աստծուն այն մահուան համար որ այդպիսի անակնկալի դանձեր էր շնորհում իրանց։

—

Վհուկը նոյնպէս զոհ մնաց դքսուհու մահը լսելով։ «Մանուկն էլ չի չարչարիլ ինձ, մտածեց նա, որ մօր մօտ տանեմ իրան։ Ես նորան մի բան կը տանեմ որ մխիթարուի, և նշմարելով մի պարկ ցորենով լի, նշան արաւ նորան որ իրան հետևի, և ցորենի պարկը, հնազանդելով վհուկի մէջ եղած խորհրդաւոր զօրութեանը, հետևեցաւ նորան։ Փոքր ինչ հեռու նա տեսաւ մի էշ և պատուիրեց սորան որ շալակէ ցորենի պարկը։ Նա տարաւ նոյնպէս մի փոքրիկ արօր, մտածելով որ այս խաղալիկները դուր կը գան փոքրիկ Հերմանին։

—

Սակայն այս բաները ամենից յարգելի առարկաները չէին այն մարդոց աչքին որոնց տեսել էր վհուկը. տեսաւ որ նոքա կռվում էին գետնին չաղ տուած փողերի համար։ Այս պատճառով նա հետևեցաւ մունետիկին, որ մի սպիտակ ջորու վրայ հեծած՝ տանում էր մի արկղ ոսկով ու արծաթով լի, որ դուքսը նշանակել էր զիւղացոց բաժանելու։ Նա մի նշան արաւ ջորուն, որ հետևեցաւ իշին ու արօրին, և մունետիկը ոչինչ չհասկացաւ։ Նա կախարդեց նորան և հետևորդներին որոնց տասնևհինգ մղոնի չափ իրանց ձիաների վրայ քնած պահեց։

—

Վհուկը առանց ամենևին խղճահարուելու դողացաւ այն բաները. այդ բոլորը իշխանի որդու համար էին, և ամեն ինչ այս երկրում նորան էր պատկանում։ Այս էլ կար որ վհուկները չեն ընդունում մեր օրէնքները և հակառակ են մեր գաղափարներին. նոքա մեզ վրայ նայում են իբրև ստեղծագործութեան ամենամեծ յափշտակողների վրայ, և ինչ որ մենք գողանում ենք բնութիւնից, նոքա կարծում են թէ իրաւունք ունին յափշտակել մեզանից։ Բայց որովհետև նոքա մեր գանձերին կարօտ չեն, պէտք է ասել որ մեծ վնաս չեն հասցնում մեզ։ Սակայն սոցա բոպէական հաճոյքները վտանգաւոր են, և շատ թշուառներ կախաղանի վրայ մնում՝ նոցա արած գողութիւնների մէջ ամբաստանուելով։

—

Իր աւարը հետը տանելով Զիլլան մօտեցաւ սարին, և անտառում գտնելով մի ճանապարհ որից կարող էր մտնել վհուկների հովիտը, շոճերի ու կուենիների ամենախիտ տեղերովը անցաւ։ Բայց յանկարծ կանգ առաւ նա իր ոտների տակ պատահելով մի տարօրինակ էակի որ մի տեսակ զզուանք պատճառեց նորան. դա մի ալեոր մարդ էր, բարձրահասակ ու վտիտ, մօրուքը այծի մօրուքի նման էր, գլուխը գունդ իբրև մի ձու, քիթը մեծ ու անճոռնի և սև վերարկուն պատառոտած։

—

Մեռածի պէս փռուած էր նա գետնին, և մի անգղ ընկել էր վրան ու սկսում էր ձեռների համը տեսնել։ Բայց հոգեվարք ծերունին զգալով որ մի բան կծում է իրան, պինդ բռնեց ու խեղդեց անգղը, կծեց նորա վիզը և զարհուրելի կատաղութեամբ սկսեց ծծել նորա արիւնը։ Առաջին անգամն էր որ վհուկը այդպիսի բան էր տեսնում, դիակը անգղ ուտէ։ Նա կարծեց

թէ մի կախարդական դէպք է այդ, և հարցրեց ծերունուն, թէ ինչն է ստիպում նորան այդպիսի բան անել։

—

«Բարեսիրտ կին, պատասխանեց նա, մի մանիր ինձ։ Ես մի դատապարտուած մարդ եմ և թափառական շրջում եմ աշխարհից հեռու։ Բաղդը ինձ այս տեղ ձգեց, նուազած ու մերձիմահ. բայց երկինքը ուղարկեց ինձ այս թռչունը որ ահա ուտում եմ կիսակենդան դրութեան մէջ, ցաւելով որ չեմ կարող մարդկանց սովորութեամբ ճաշակել նորան»։ Այս թշուառը կարծում էր թէ մի խեղճ փայտ ժողովող պառաւի հետ է խօսում, որովհետև եթէ ապացուցուած չէ թէ վհուկները կարող են իրանց ուզած ձևերը ընդունել, այս յայտնի է գոնեա որ կարող են ամէն տեսակ աչքակապութիւններ անել։

—

«Վեր կաց և հետևէ ինձ, ասաց նորան վհուկը։ Ես քեզ կը տանեմ մի այնպիսի տեղ ուր կարող ես մարդկանցից ազատ ապրել»։ Աքսորականը հետևեցաւ Զիլլային մինչև ժայռերի նեղ ու սարսափելի անցքը որից էշն ու ջորին զարհուրած յետ քաշուեցան, բայց վհուկը կախարդեց նրանց և անցան։ Իսկ մարդը այնքան ցանկանում էր իր հալածողներից ազատուիլ որ հարկաւոր եղաւ նորա աչքերը կապել։ Նա հետևեցաւ կենդանիներին, և հենց որ ոտը Վհուկների Հովիտը դրաւ, ճանաչեց որ իր առաջնորդը առաջին կարգի վհուկ է։

—

«Ես անփորձ ու տգէտ մարդ չեմ, ասաց նորան մեր ծերը, և բաւական ուսումնասիրել եմ գիւթութիւնը որ հասկանամ թէ ում հետ գործ ունիմ։ Գիտեմ որ ինձ այնպիսի երկիր ես տանում որտեղից երբէք դուրս գալու չեմ. բայց ինչ բաղդի էլ հանդիպեցնես ինձ, չէ կարող վատթար լինել այն բաղդից որ մնում է ինձ մարդկանց աշխարհում։ Ուրեմն հնազանդում եմ քեզ առանց տրտնջալու, լաւ հասկանալով մի և նոյն ժամանակ որ ամենայն ընդդիմութիւն իմ կողմից անօգուտ կը լինէր։ Գուցէ փոքր ինչ խըղճաս մի ալեոր մարդու և հետաքրքիր լինիս տեսնել նորան մեռնելիս իր գեղեցիկ մահով, որի ժամը շուտով կը զարկէ։

—

—Դու պարծենում ես թէ գիտուն ես, բայց անմիտ բաներ ես խօսում, պատասխանեց Զիլլան։ Եթէ վհուկներին ճանաչէիր, կ'իմանայիր որ ոչինչ վնաս չեն կարող հասցնել։ Տիեզերական Ոգին այն պայմանով միայն թոյլ տուեց նոցա անմահութիւնը ձեռք բերել որ կեանքը յարգեն. այլապէս վաղուց արդէն ձեր ցեղի հետքը չէր երևալ։ Հետևէ ինձ և այլևս յիմար բաներ մի խօսիր, ապա թէ ոչ յետ կը տանեմ քեզ մարդկանց երկիրը։—Ասուած մի արասցէ—մտածեց ծերունին, և աւելի համեստ կերպարանք բռնելով, հասաւ վհուկի հետ Հերման իշխանի նոր բնակարանը։

—

Մի ամբողջ օր էր որ վհուկը հեռացել էր երեխայից, և սա որ ի բնէ բարեսիրտ էր, ոչ աշխատել էր, ոչ խաղացել և ոչ կերել, սպասում էր մօրը և միայն նորա վրայ էր մտածում։ Հեռուից տեսաւ ծերունուն և վազեց նորա առաջ, կարծելով թէ նա գալիս է դքսուհու գալը յայտնելու։ «Բարի եկար, պատուելի Բօնուս», ասաց նա, և յիշելով իւր իշխանական ձևերը, ձեռը մեկնեց նորան որ համբուրէ, բայց խեղճ դաստիարակը քիչ մնաց որ գլխիվայր ընկէր երբ ճանաչեց Հէրմանին որին երբէք յոյս չունէր տեսնելու, և նա ուրախութեամբ արտասուքներ թափեց գրկելով ու համբուրելով երեխային իբրև թէ հասարակ չինականի որդի լինէր։

—

Այն ժամանակ վհուկը յայտնեց Հէրմանին որ մայրը մեռել է, առանց մտածելու թէ դորանով մեծ վիշտ է պատճառում նորան, որովհետև նա չէր հասկանում թէ ինչպէս մի մահկանացու էակ չէ կարող անխռով լսել ուրիշների մահուան լուրը։ Մանուկը շատ արտասուք թափեց, և զայրացած ասաց վհուկին թէ որովհետև այդպիսի բօթ էր բերում իրան, աւելորդ էր դաստիարակին իւր մօտ բերել։ Վհուկը ուսերը բարձրացրեց և բարկացած հեռացաւ նորանից։ Բօնուսը չբարկացաւ. ընդհակառակն նա նստաւ երեխայի կողքին և իւր արտասուքի կաթիլները խառնում էր նորա արտասուքների հետ։

—

Այս տեսնելով մանուկը, որ շատ բարի էր, գրկեց նորան և ասաց թէ համաձայն է իւր մօտ պահել նորան և իւր տանը բնակեցնել, այն պայմանով որ երբէք ուսման վրայ բան չպիտի ասէ իրան։ «Արդարև, ասաց պատուելի Բօնուսը, որովհետև մենք յափտեան մնալու ենք այստեղ, չգիտեմ թէ ինչ օգուտ կարող է տալ մեզ ուսումը. նուիրենք մեր անձը հանգիստ ու խաղաղ կեանքի։ Խոստովանում եմ որ ես հաստատ եմ այս կարծիքին, և եթէ ինձ կը լսէք, լաւ կը լինէր որ մի բան ուտէինք, որովհետև վաղուց է որ ծոմ եմ պահում»։ Նոյն րոպէին շունը վեռադառնում էր որսից մի գեղեցիկ նապաստակ ատամների մէջ բռնած։

—

Այս հաւատարիմ կենդանին մոռանալով դաստիարակի երկչոտութիւնը՝ տուեց նորան յօժարութեամբ իւր որսը, որ պատուելի Բօնուսը պատրաստութիւն տեսաւ խորովելու, բայց վհուկները, որ դիտում էին նորա բոլոր քայլերը, մի նորանչան աչքակապութիւն արին. հէնց որ սկսաւ նապաստակի կաշին քերթել, թվում էր թէ նապաստակը մեծանում ու Բօնուսի կերպարանքն է առնում, այնպէս որ նա երևակայում էր թէ ինքն իւր կաշին է քերթում։ Դաստիարակը զարհուրելով՝ իւր որսը կայծերի վրայ դրաւ, յուսալով թէ խորոված մսի հոտը կ՚աղատէ նորան այդ սարսափելի երևոյթից. բայց իրան այնպէս էր թվում թէ իւր սեպհական մարմինն է այրում։

—

Նա մտաբերեց որ մարդիկ դատապարտել էին իրան ողջ խորովել, և զգալով որ հարկաւոր չէ վհուկներին զժգոհութիւն պատճառել, որսը յետ տուեց շանը և այնուհետև հրաժարուեցաւ կենդանի միս ուտելուց։ Նա դուրս դնաց արմատներ, պտուղներ ու հատիկներ հաւաքելու, և այնքան պաշար ժողովեց ձմեռուան համար որ տունը լցուել էր և հազիւ քնելու տեղ էր մնացել։ Այնուհետև, երկնչելով որ մի գուցէ վհուկները իւր պաշարը գողանան, և երևակայելով թէ այնքան կախարդութիւն գիտէ որ կարող է նոցա աչքին պատկառելի երևիլ, կաւից մի քանի խորհրդաւոր պատկերներ ձևակերպեց ու դրաւ կտուրի վրայ։

—

Բայց նորա գիտութիւնը թիւր էր և խորհրդաւոր պատկերները այնքան վայրենի որ վհուկները ոչինչ ուշադրութիւն չդարձրին և միայն ծիծաղում էին նոցա տգեղութեան վրայ։ Ցեսնելով որ վհուկները ուրախ ու զուարթ են, Բօնուսը սիրտ արաւ հարցնելու նոցա թէ ուր կարող է գտնել աշխատութեան գործիքներ. «առանց այդ գործիքների, ասում էր նա, անկարելի է ինձ մի լաւ բան անել։» Վհուկները տարան նորան մի քարայր ուր ժողովել դիզել էին իրանց արշաւանքների ժամանակ գողացած բազմաթիւ առարկաներ, որոնք նոցա բոպէական հետաքրքրութիւնը լցնելուց յետոյ՝ բարձիթողի էին եղած։

—

Բօնուսը շատ զարմացաւ գտնելով այնտեղ ամէն տեսակ անօթներ և չռայլութեան առարկաներ՝ խառն այնպիսի իրեղէնների հետ որ ոչինչ արժէք չունէին։ Ամէնից առաջ նա որոնեց մի քնզրան, ամանաներ և ունելիք, որ թանգագին ակների ու չքեղ կերպասների միջից հանեց։ Նա դուրս բերեց նոյնպէս մի պարկ ալիւր, չաքրած մրգեր, մի լուացուելու աման և մի կոնք։ Գրքերի ու թանաքամանների վրայ ոչինչ ուշադրութիւն չդարձրեց. «Ամէնից առաջ մարմնի վրայ մտածենք, ասաց նա, միտքը թող յետոյ պահանջէ իւր մնունդը, եթէ հարկաւոր համարի»։

—

Նա Հէրմանի հետ մի քանի անգամ ճանապարհորդեց դէպի քարայրը որ վհուկները իրանց թանգարանն էին համարում, իսկ Բօնուսը պարզապէս խանութ էր անուանում։ Նոքա գտան այն տեղ բոլորը ինչ որ հարկաւոր էր կարագ, պանիր ու խմորեղէններ պատրաստելու։ Հէրմանի առանձին ուշադրութիւնը գրաւեցին քաղցրեղէնները որ իւր հետ տարաւ, և Բօնուսը, բազմաթիւ փորձեր անելուց յետոյ, այնպիսի համեղ կարկանդակներ էր պատրաստում որ մի աբեղայ ուտելով մատներն էլ հետը կը լղէր։ Եւ կուշտ ուտելու ու լաւ քնելու քաղցր զբաղմունքի մէջ՝ դաստիարակը մոռացաւ իւր թշուառութեան օրերը և ամենևին չէր մտածում գրել կարդալով անհանգիստ անել երիտասարդ իշխանին։

—

1009
38962

Վհուկների թագուհին եկաւ տեսնելու մահկանացուների բնակարանը իւր բոլոր պարագաներով, և որովհետև նորա ընկերներից շատերը դժգոհ էին տեսնելով որ մէկի տեղ երկու մարդ եկել հաստատուել էին իրանց կալուածքների վրայ, ասաց նոցա. «չգիտեմ թէ ինչի էք այդպէս անհանդիստ լինում։ Այդ մարդը ծեր է, և հաղիւ թէ այնքան ապրի մինչև որ Հէրմանը մեծանայ։ Բացի դորանից դա մի հետաքրքիր կենդանի է, և իւր մարմնի վրայ տարած խնամքը ուսումնասիրութեան արժանի է թվում ինձ։ Տեսէք ինչպէս չէ հնարում այս մարդը իւր մարմնի պահպանութեան համար։ Բայց նա կեղտոտ է, և ես կամենում եմ որ վայելուչ կերպով հագնուի»։

—

Նա կանչեց Բօնուսին և ասաց նորան. «Բո վերարկուն մաշուած է և այս երեխայի պատառոտած հագուստը չեն կարող տանել իմ աչքերը։ Դու չափից դուրս զբաղուած ես կարկանդակներ թխելով ու զանազան քաղցրեղէններ պատրաստելով։ Եթէ չես իմանում կարել ու մանել, գնա քաղաքը և որոնէ մի որ և իցէ նոր հագուստ, այսուհետև չտեսնեմ այդ կեղտոտ հագուստներով։—Շատ լաւ, տիկին, պատասխանեց դաստիարակը պատկառանքով ու քաղաքավարութեամբ. ձեր կամքը կը կատարուի, և եթէ իմ կերպարանքը կարող է հաճելի լինել ձեզ, ես այդ բանի համար ոչինչ չեմ խնայիլ»։

—

Բայց իւր սեռի յարմար հագուստ չգտաւ վհուկների խանութում, և չիմանալով թէ ինչ անէ, դիմեց պառաւ Միլիթին, որ փոքր ինչ տխմար կախարդ էր, որովհետև բաժակն այն ժամանակ էր խմել երբ արդէն երեխայութեան մէջ էր ընկել, Բօնուսը խնդրեց նորան որ մի կերպով օգնէ իրան հագնուելու։ Միլիթը որ սիրում էր երբ ուրիշները իրան խորհուրդ էին հարցնում, և որովհետև ոչ ոք այդ պատիւը չէր ցոյց տալիս նորան, բարեկամացաւ դաստիարակի հետ, և տուաւ նորան իւր նոր բրդէ շրջազգեստներից մինը, ինչպէս նաև մի զլխարկ ծայրերը կարմիրներով զարդարած, և այս կերպով կանացի հագուստներ հագած՝ մեր պատուելի Բօնուսը մի բարձրահասակ ու տգեղ կախարդի կերպարանք ստացաւ։

—

Փոքրիկ Բէգիս վհուկը, որ նոյն բոպէին անցնում էր, այնքան զուարճալի գտաւ նորան որ մի ամբողջ ժամ ծիծաղեցաւ. բայց ծիծաղելով հանդերձ համոզեց նորան որ երեխային իւր մօտ բերէ, որպէս զի հագցնէ նորան իւր զգեստներից մինը, և երբ մանուկը եկաւ մատաղահաս վհուկը լուացաւ նորան, անուշահոտ իւղերով օծեց, մազերը գեղեցիկ կերպով սանդրեց, գլխին ծաղիկ պսակ դրաւ, վզին մարգարտէ մանեակ անցկացրեց, մէջքին ոսկէ քամար կապեց և վարդագոյն շրջազգեստի ծալքերը կարգի բերեց։ Այս կերպով հագած մանուկը այնքան գեղեցիկ երևեցաւ

նորան, որ վհուկը ցանկանում էր շարունակ երգելիս ու պարելիս տեսնել նորան և զուարճանալ։

—

Հէրմանը նոյնպէս հիանում էր իւր գեղեցկութեամբ, նա շատ ախորժում էր այն անուշահոտութիւնից որ բուրում էին նորա հագուստները, բայց որովհետև չգիտէր հնազանդել, մերժեց պար գալու, և այս բանի վրայ փոքրիկ Բէգիսը սաստիկ բարկացաւ։ Նա խլեց երեխայից մանեակը, պատռատեց նորա շրջազգեստը, խառնափնթորեց մազերը, երեսին մի տեսակ սև սերմերի հիւթը քսեց, և թողեց նորան խայտառակ, համարեա մերկ դրութեան մէջ։ Երեխայի կատաղութեան չափը չկար որ չէր կարողանում այդ խելագար վհուկի նախատինքներին նախատանքով պատասխանել։

—

Սակայն Բօնուսը փոքրիկ Բէգիսի բարկութիւնը տեսնելով՝ փախել էր։ Հէրմանը տուն դառնալուն պէս՝ յանդիմանեց նորան որ մի այդպիսի չնչին վհուկի առաջից քաշուել էր, ասելով թէ մի հաւի չափ էլ սիրտ չունի։ «Եթէ քաջասիրտ և ուժեղ լինէի, չէի կարող պաշտպանել ձեզ։ Դուք ինքներդ լաւ էք տեսնում որ չկարողացաք պաշտպանել ձեր անձը։ Վհուկները, մինչև անգամ նոքա որոնք ճանճի չափ փոքր են, շատ երկիւղալի են, և ամենից լաւն այն է որ մարդ համբերութեամբ տանի նոցա բոպէական հաճոյքներին։

—

«Ես՝ որ պիտի հանդիստ կրակի վրայ խորովուիմ եթէ այստեղից դուրս գամ, վճռել եմ յարմարուիլ այս տիկինների բոլոր հաճոյքներին, և եթէ ինձ պատուիրած լինէին պարել, ես կը հնազանդէի և մինչև անգամ կը վազվզեի էլ։» Մանուկը զգաց որ իւր դաստիարակը իրաւունք ունէր, այնու ամենայնիւ ատելով ատեց նորան իւր վարմունքի համար։ Նա վազեց Զիլլային պատմելու իւր անյաջողութիւնը և ցոյց տալու թէ ինչպէս քաշքրտել ու անպատուել էին իրան։ Զիլլայի դէմքը բարկութիւնից կարմրեցաւ. նա տարաւ երեխային թագուհու մօտ և դանդատեցաւ Բէգիսի դէմ։

—

«Դու արժանի էիր այդ բանին, ասաց թագուհին Հէրմանին. դու այնպէս ստորացնում ես մեր առաջ քո ցեղի արժանաւորութիւնը, որ ոչ ոք այստեղ չէ կարող հաւատ ընծայել այդ արժանաւորութեանը։ Դու մի վայրենի անասունի չափ էլ ազնիւ կեանք չունիս, որովհետև նա իւր դատծովը բաւականանում է, իսկ դուք, քո դաստիարակը և դու, միայն ձեր ախորժակը գրգռելու վրայ էք խորհում, որով ձեր բնական քաղցը աւելանում է։ Էլ ամենևին ձեր մտքի մնունդի վրայ չէք մտածում, իբրև թէ միայն բերան ու ստամոքս լինէիք. արդարև արհամարհելի էք դուք և ոչընչով համակրութեան արժանի չէք։

—

Երեխայի ամօթի չափը չկար, և Զիլլան հասկացաւ որ Թագուհու յանդիմանութիւնը աւելի իրան էր վերաբերում քան թէ Հէրմանին։ Նա ասաց երեխային որ եթէ կամենում է կրթուիլ, ամէն ջանք գործ կը դնէ այդ բանի համար, և տանելով նորան իւր մօտ, ընտրեց նորա համար մի սպիտակ բրդէ բաճկոն և Բէգիսից աւելի այրական ձեւով հագցրեց նորան։ Բացի սորանից տուաւ նորան մի կաշուէ հագուստ էլ անտառը վազվզելու համար, և գեղեցիկ-ճշէնքեր կենդանիներից պաշտպանուելու համար՝ որոնք կարող էին սպառնալ նորան տեսնելով որ արդէն հասակն առել է, բայց վնուկը երդուել տուեց Հէրմանին որ միայն իւր անձի պաշտպանութեան համար արիւն թափէ։

—

Յետոյ տուաւ նորան մի գիրք ասելով թէ երբ կը կարողանայ կարդալ, յանձնառու կը լինի գեղեցիկ բաներ ուսուցանել նորան, որով կարող է երջանկանալ։ Հէրմանը ոգևորուած՝ չտապելով գնաց իւր դաստիարակի մօտ, և մի ճշմարիտ հերոսական քաջի տալով՝ կրակը ձգեց Բօնուսի թխած բոլոր կարկանդակները։ «Էլ չեմ կամենում արհամարհուած մնալ, ասաց նա. էլ չեմ կամենում իմ փորը աստուած չինել ինձ համար, ես կամենում եմ գեղեցիկ լինել և ուրիշներից ստացած մեծարանքներով փառաւորուիլ. պատուիրում եմ քեզ գրել կարդալ ուսուցանել ինձ. եգուց կամենում եմ ընթերցանութիւն իմանալ։

—

Պատուելի Բօնուսը ակ քաշելով հնազանդեցաւ, բայց միւս օրը մանուկը դեռ չգիտէր կարդալ, և զայրանալով ասաց իւր դաստիարակին. «Դու չգիտես ուսուցանել, գուցէ և ոչինչ էլ չգիտես։ Եթէ այդպէս է, մնացիր այդ աղախնի շորերի մէջ որ քեզ սազում են, և խոհանոցի գործերով զբաղուիր. այսուհետև ես քեզ կ՝անուանեմ պատանուհի Բօնա։ Երեկոյեանները կը դամ ընթերցանելու և պարկեշտ քո պանդոկում, իսկ իմ ցեղի պատիւը և երջանկութիւն տուող գիտութիւնը ուրիշ տեղ կ՝որոնեմ։» Այս ասելով դուրս եկաւ իւր շան հետ, բաժանուելով իւր դաստիարակից որ ապշած ու քարացած մնացել էր նորա խօսքերը լսելով։

—

Երբ Զիլլան տեսաւ որ մանուկը հաստատամիտ ու հնազանդ է, հպարտութեամբ ու փառասիրութեամբ լի, թէև առանց հասկանալու կրկնում էր Թագուհուց և իրանից լսած խօսքերը, այնու ամենայնիւ զարմացաւ տեսնելով թէ մինչև որ աստիճան անձնասիրութիւնը տիրել էր նորա մատաղ հոգու վրայ, և կամեցաւ անձամբ փորձել նորա կրթութեան փորձը ղլուխ տանելու։ Մանուկը այնքան ուշադիր ու խելացի էր որ վնուկը առանձին բաւականութիւն էր զգում նորա հետ պարապելու, և կամաց կամաց, ամէն օր աւելի երկար ժամանակ պահելով նորան իւր մօտ, բանն այնտեղ հասաւ որ էլ չէր կարողանում հեռու պահել իրան նորա ընկերութիւնից։

—

Երբ արեը իւր ճառագայթները սփռում էր երկրի վրայ, նա զբօսնում էր երեխայի հետ և հաղորդում էր աստուածային երկրի գաղտնիքները բնութեան մէջ, լուսոյ պատմութիւնը և նորա ազդեցութիւնը բոյսերի վրայ, քարերի խորհուրդը և ջրերի լեզուն, թէ ինչ հնարներով կարելի է հնազանդեցնել ամենակատաղի գազանները, ինչպէս կարելի է ծառերն ու ժայռերը տեղից շարժել, ինչպէս հնարաւոր է երդելով անհիթ զօրութիւնները հանդէս բերել, ինչպէս կարելի է մատներից կայծեր արձակել և խօսակցել երկրի տակ ծածկուած ոգիների հետ։

—

Երեկոյեանները, երբ թուսինը փայլում էր, ուսուցանում էր նորան գիշերուան խորհրդաւոր լեզուն, աստղերի պատմութիւնը, և թէ ինչպէս կարելի է երագելով մինչև ամպերը բարձրանալ։ Նա ուսուցանում էր նորան անջատուիլ իւր մարմնից և տեսնել կախարդական աչքերով՝ որոնք պահվում էին մարգագետնի վճիտ ջրերի կաթիլների մէջ։ Մեկնում էր նորան նոյնպէս թէ ինչից է բաղկացած ծիր կաթինը, և երբեմն անջատում էր նորան իւր սեպհական ոգուց և զբօսեցնում համր տարածութեան մէջ ամենաբարձր սարերից վերև։

—

Երբ հողմը, ձիւնն ու անձրևը սպառնում էին թմրեցնել իւր աչակերտի հոգին, տանում էր նորան խորհրդաւոր քարայրները ուր վնուկները որ միշտ վառ են պահում կախարդական հուրը՝ համաձայնում էին ընդունել նորան իրանց մի քանի խօսակցութիւնների մէջ։ Այնտեղ սովորեցաւ նա խօսիլ մեռելների հոգիների հետ, իմանալ բացակայ զանուածների միտքը, չափել երկնքի բարձրութիւնը առանց թարթելու նորա վրայ, կշռել երկիրն ու մոլորակները մի անտեսանելի կշեռքով, և ուրիշ բիւրաւոր հրաշալի գաղտնիքներ որոնք վնուկների համար երեխայական խաղալիկներ են։

—

Երբ Հէրմանը սովորեցաւ այս բոլոր բաները, արդէն սանսեհինդ տարեկան էր, և այնքան գեղեցիկ, հաճոյատեսիլ ու լաւ կրթուած էր, որ եթէ վնուկները սիրելու ընդունակ լինէին, բոլորն էլ կը սիրահարուէին նորա վրայ. բայց մեռնելու անհնարաւորութիւնը այնպէս չափաւորեց նոցա ցանկութիւնները, որ անկարելի է նոցա մի որ և իցէ մարդկային զգացման բոլորովին անձնատուր լինել. նոյն իսկ բարեկամութիւնը արգելուած է, որովհետև կարող է վիշտ պատճառել և խանգարել նոցա գոյութեան կատարեալ ու միակերպ հաւասարակշռութիւնը։

—

Ինչ որ մնացել է նոցա մէջ մարդկային բնութիւնից, այնպէս չափաւորուած ու մեղմուած է որ նոցա յուզմունքը ոչ վիշտ ունի և ոչ էլ երկար տևողութիւն։ Այսպէս ահա նոքա կատաղի ու զայրացկոտ են, բայց շուտ են մոռացութեան տալիս, և այդ ի հարկէ օգուտ է բերում նոցա։ Նոքա շատ են կոտրուում և միմեանց նախանձում, բայց միշտ ա-

զատ լինելով մոռացութեան տալու ինչ որ կամենան, և հոգն ու զայրոյթը հեռացնելու՝ երբ արդէն ձանձրանում են, նոքա ոչինչի համար յուզվում ու ցնծում են։ Նոքա չգիտեն թէ ինչ է երջանկութիւնը, հետևաբար և չեն էլ որոնում նորան։

—

Նոքա, ճշմարիտ է, գիտութեան տէր են, բայց այդ գիտութեան բարիքը մեզ պէս չեն վայելում, որովհետև գործ են դնում նորան միայն տգիտութեան թշուառութիւններից պաշտպանուելու համար, իսկ ուրիշներին տգիտութիւնից ազատելու բաւականութիւնը չեն վայելում։ Երիտասարդ Հէրմանին կրթելով՝ նոքա պարծենում էին։ որովհետև իրանց ընկերութեան մէջ խառնուելու արժանի էր և համարեա համահաւասար էր ոցա. բայց զգուշանալով որ մի գուցէ սիրահարուին նորա վրայ, միշտ ասում էին միմեանց. «Զմոռանանք որ դա մեռնելու է»։ Այնու ամենայնիւ եթէ Հէրմանը մէկին մի շողոքորթական խօսք էր ասում, միւսը տրտունջ էր յայտնում, և նա ստիպուած էր նորա սիրտը շահելու համար ուրիշ աւելի շողոքորթական խօսք ասել։

—

Սակայն այս չէ նշանակում թէ նոքա անմիտ կամ ունայնասէր են. այլ բարձր են գնահատում իրանց որ գիտութեամբ այնպիսի կեանք են ձեռք բերել որ անմատչելի է անում նոցա ամէն տեսակ վնասների։ Ամենից աւելի նախանձոտը Ջիլլան էր, որովհետև նա առանձին իրաւունքներ ունէր կամ գոնեա կարծում էր թէ ունի Հէրմանի վրայ, և երբ սա գովում էր Բէգիսի ուրախ բնաւորութիւնը կամ Թագուհու իմաստութիւնը, Ջիլլան սառն կերպարանք էր ցոյց տալիս նորան և յիշում էր թէ մարդկանց զաւակը որքան չնչին էակ պիտի երևի իւր աչքին։

—

Սակայն Հէրմանը միւս բոլոր վհուկներից աւելի էր սիրում նորան և իւր մօր տեղն էր ընդունում. բայց նա երկչոտ ու հպարտ էր, և այնքան սակաւ էին խօսում նորա շուրջը սիրոյ վրայ, որ երբէք չէր մտածում ուրիշին իրանից աւելի սիրել։ Ժամանակ առ ժամանակ տեսութիւն էր գնում պատուելի Բօնուսին որ չարունակում էր նոր նոր կերակուրներ հնարել և թշուառ չէր համարում իրան առանձնութեան մէջ, թէև վհուկները երբեմն զուարճանում էին տանջելով նորան։

—

Նոքա ամէն տեսակ ծիծաղելի աչքակապութիւններով չարչարում էին նորան։ Երբեմն նա իրան կին էր համարում, երևակայում էր թէ մի եթովպացի կամենում է ծախել նորան Արևելքի խալիֆներին։

Այսպիսի զէպքերում նա թաքչում էր ժայռերի մէջ ու քաղցած մնում, և այս նորա համար մեծ պատիժ էր։ Երբեմն էլ Բէգիսը հաւատացնում էր թէ սիրահարուած է նորա վրայ, և ժամադիր տեղեր էր նշանակում ուր անտեսանելի ձեռքեր օդը բարձրանում ու ծեծում էին նորան։ Այս բոլորը նորան պատժելու համար էր, որովհետև մեծ կարծիք ունէր իւր կախարդագիտութեան վրայ և կոպիտ ու տգայական հմայութիւնների անձնատուր էր լինում։

—

Սակայն և այնպէս նա առողջ էր, քանի գնում գերանում էր և համարեա չէր ծերանում, որովհետև որքան էլ լինի՝ վհուկները բարի են, և եթէ մի կողմից յոգնեցնում կամ վախեցնում էին նորան, միւս կողմից քուն էին բերում կամ ախորժակ տալիս նորան։ Հէրմանն երբեմն փորձում էր զբաղուիլ նորանով. բայց նորա ինքնասիրութիւնը տեսնելով՝ արհամարհանքով հեռանում էր նորանից։ Միակ էակը որ ճշմարիտ բարեկամութիւն էր ցոյց տալիս նորան, իւր շունն էր, և երբեմն, երբ այս հաւատարիմ կենդանու աչքերը կարծես ասում էին նորան՝ «Ես քեզ սիրում եմ», Հէրմանը արտասուք էր թափում, առանց պատճառը իմանալու։

—

Բայց շունը այնքան ծերացել էր որ մի օր էլ չկարողացաւ ոտի կանգնել ու տիրոջ ետևից գնալ։ Հէրմանը վազեվազ գնաց Ջիլլայի մօտ։ «Իմ շունը պիտի մեռնի, ասաց նա, պէտք է այդ բանի առաջն առնել։— Ձեմ կարող, պատասխանեց վհուկը. երկրի, վրայ ամէն բան պիտի մեռնի, բացի վհուկներից։—Գոնեա մի քանի տարով երկարացրու նորա կեանքը, վրայ բերեց Հէրմանը. դու աւելի դժուար բաներ կարող ես անել։ Եթէ իմ շունը մեռնի, ինչ կը լինի իմ դրութիւնը։ Քեզանից յետոյ երկրի վրայ ամէնից շատ նորան եմ սիրում, և ոչընչով չեմ կարող բաժանուիլ նորանից։

—

—Խելագարի պէս ես խօսում, ասաց վհուկը։ Դու կարող ես չանդ սիրել, որովհետև. հարկաւոր է որ մարդը միշտ խելագարի պէս մի բան սիրէ. բայց չեմ կամենում որ ասես թէ ինձ սիրում ես, եթէ ինձ չան հետ ես հաւասարում։ Եթէ քո շունը մեռնի, կ՚երթամ կը բերեմ քեզ մի ուրիշը, և նորան էլ նոյնքան կը սիրես։ — Ոչ, ասաց Հէրմանը, դորանից յետոյ չեմ կամենում ուրիշ շուն ունենալ, և որովհետև ինձ վիճակուած չէ քեզ սիրել, մահը կը լինի իմ սիրոյ միակ առարկան։

—

Շունը մեռաւ, և մանուկը անմխիթար դրութեան մէջ ընկաւ։ Նորա ցաւը անհասկանալի էր պատուելի Բօնուսի համար, իսկ վհուկները մինչև անգամ արհամարհեցին նորան։ Այն ժամանակ Հէրմանը զգաց թէ ինչ է պակասում իրան վհուկների թագաւորութեան մէջ։ Նորան այնտեղ խնամել ու կրթել էին, պաշտպանել ու ամէն տեսակ բարիք էին թափել նորա գլխին. բայց ոչ ոք չէր սիրում նորան, ինքն էլ ոչ ոքին չէր կարող սիրել։ Ջիլլան փորձեց նորա տրամութիւնը փարատել, ման ածելով նորան սարի ամենագեղեցիկ տեղերը։ Նա ցոյց տուեց Հէրմանին այն հրաշալի պալատները որ վհուկները մի ժամուան մէջ կառուցանում ու քանդում են։

—

Ցույց տուեց Նորան Հիմալայից բարձր բուրգեր և անդամանդի ու եաղութի ահագին կոյտեր, ամրոցներ՝ որոնց պատերը ծածկուած էին գոյնզգոյն ծաղիկներով բոցափայլ սիւներ ու կամարակապ սրահներ, ականակուռ պարտէզներ՝ ուր թռչունները հողեղմայլ երգեր էին երգում. բայց Հէրմանն այնքան բան գիտէր արդէն որ այդ բոլոր հրաշալիքը չէր կարող մեծ բանի տեղ ընդունել, և մի օր ասաց Զիլլային. «Այդ բոլորը երազական բաներ են, և ինչ որ դու ինձ ցոյց ես տալիս իսկապէս գոյութիւն չունի»։

—

Զիլլան փորձեց կախարդել Նորան մի աւելի գեղեցիկ երազով. վհուկը տարաւ Նորան մինչև լուսինը։ Հէրմանը մի բոպէ այնտեղ մնալուց յետոյ, կամեցաւ մինչև արեգակը բարձրանալ, և վհուկը իւր բոլոր զօրութիւնը գործ դնելով՝ սահեցան մտան փայլուն արևի մէջ։ Այնու ամենայնիւ Հէրմանը իւր տեսածներին չէր հաւատում. նա միշտ ասում էր վհուկին. «Դու ինձ երազական և ոչ իրական կեանք ես ցոյց տալիս։» Եւ երբ զարթում էր, «ոչինչ չեմ մտաբերում, ասում էր նա, իբրև թէ ոչինչ տեսած չլինէի։»

—

Եւ նա սկսաւ ձանձրանալ։ Թագուհին նչմարեց որ Նորա կերպարանքը գունաթափուել, սովորական ղուարթութիւնը կորցրել էր։ «Որովհետև չես կարող երկինքը սիրել, ասաց նա, փորձէ գոնէ երկիրը սիրել։» Հէրմանը երկար մտածեց այս խօսքերի վրայ. նա մտաբերեց որ Զիլլան մի ժամանակ տուել էր իրան ցորեն, արօր, մի էշ և մի ջորի։ Նա հերկեց երկիրը, ցանեց ու մնկեց. երկրի պտղաբերութիւնը առանձին բաւականութիւն էր պատճառում Նորան։ Բօնուսը հիանում էր որ աղալու ցորեն էր ստանում և ամէն օր հաց էր թխում։

—

Բայց մենակ ուտելու բաւականութիւնը անհասկանալի էր Հէրմանին, և երբ որ տեսաւ թէ ինչ կարող է տալ երկիրը մարդուն որ երեսի քրտինքով մշակում է Նորան, էլ ոչինչ չպահանջեց Նորանից և բաւականացաւ միայն Նորանով՝ ինչ որ երկիրը ձրի է տալիս մարդուն։ Թագուհին ասաց Նորան. «Հեղեղը միշտ վճիտ չէ. վերջին փոթորիկները խորտակեցին Նորա ափերը, և այնտեղ ուր դու սիրում էիր լողանալ, խիճ ու աւազ է բերում։ Փորձէ Նորա ուղղութիւնը կանոնաւորելու, աշխատէ սիրել ջուրը, եթէ երկիրը էլ չես սիրում։»

—

Հէրմանը ուղղեց հեղեղի ընթացքը և տուաւ Նորան իւր առաջուան գեղեցկութիւնը, իւր ներդաշնակ կարկաջանքը, իւր հեզասահ ընթացքը, իւր խաղաղ հանդարտութիւնը փոքրիկ լճերում. բայց մի օր էլ նա գտաւ որ հեղեղը չափազանց հնազանդում է իւր կամքին, որովհետև էլ ոչինչ չունէր հրամայելու Նորան։ Նա խորտակեց իւր կառուցած թումբը և ախորժում էր տեսնել թէ ինչպէս ջուրը ստանում է իւր ազատութիւնը և սկսում է իւր աւերմունքները։ «Այդ ինչ հաճոյքներ են, ասաց Նորան Զիլլան։—Ինչի համար բռնանամ ջրի վրայ, պատասխանեց նա, եթէ։ ինձ չեն կարող սիրել, չեմ էլ կամենում ատելի լինել։»

—

Զիլլան այնքան զարմացաւ ու բարկացաւ իւր որդեգրի ապերախտութեան վրայ որ մի մեծ տխրութիւն տիրեց սրտին։ «Ես կամենում եմ մոռանալ Նորան, ասաց թագուհուն, որովհետև նա ինձ աւելի հոգս է պատճառում քան թէ արժանի է։ Թոյլ տուր որ դուրս տանեմ Նորան այստեղից և իւր նմանների ընկերութեանը յանձնեմ։ Դու ինձ ուղիղ ասացիր թէ կը ձանձրանամ, և պառաւ Տրօլլիան իրաւունք ունէր նախատել ինձ իմ պաշտպանութեան ու զգուանքների համար։

—

Արա ինչ որ կամենաս, ասաց թագուհին, բայց իմացիր որ այդ երեխան այժմ թշուառ կը լինի մարդկանց մէջ, և այնքան չուտ չես մոռանալ Նորան ինչպէս որ կարծում ես։ Մենք ոչինչ չպիտի ջնջենք, և սակայն դու մի բան ջնջեցիր Նորա հոգում։—Ի՞նչ, ասաց Զիլլան։—Այն բարիքների անգիտութիւնը որոնց նա երբէք չէ կարող հասնել։ Փորձէ աքսորելու Նորան, և կը տեսնես։—Ի՞նչ կը տեսնեմ, ես ինքս չեմ կամենում աչքիս առաջ ունենալ Նորան։—Մտքումդ կ՚ունենաս Նորան, որովհետև նա կը յանդիմանէ քեզ, և մի ուրուական գիշեր ցերեկ կ՚աղաղակէ քո ետևից։»

—

Զիլլան չհասկացաւ թէ ինչ էր ասում թագուհին։ Երբէք մի վատութիւն արած չլինելով, մինչև անդամ բաժակը ըմպելուց առաջ, նա չգիտէր թէ խղճմտանք ասածը ինչ է։ Եւ որովհետև ազատ ներգործելու իրաւունքն ունէր, ասաց Հէրմանին. «Դու չես հաւանում մեր թագաւորութիւնը, կամենում ես վերադառնալ ձերոնց երկիրը։» Հազար անդամ ցանկացել էր Հէրմանը ինչ որ վհուկը առաջարկել էր Նորան և երբէք չէր համարձակել ասել Նորան, երկնչելով թէ մի գուցէ ապերախտ երևայ ու վիրաւորէ Զիլլային։ Այս անակնկալ առաջարկութիւնից զարմացած՝ կասկածում էր թէ իւր լսածը իրողութիւն է թէ կատակ։

—

«Քո կամքը, պատասխանեց նա, իմ ցանկութեան համաձայն է։—Եթէ այդպէս է, գնա կանչէ Բօնուսին, և ես դուրս կը բերեմ ձեզ մեր երկրից։» Անկարելի եղաւ համոզել Բօնուսին որ թողու հեռանայ վհուկների հովից։ Նա գնաց ընկաւ թագուհու ոտները և ասաց Նորան. «Միթէ կամենում ես որ գնամ կեանքիս վերջին օրերը տանջանքների մէջ անցընեմ. միթէ ես ոքմին անհանգիստ եմ անում այստեղ։ Ես ապրում եմ խոտեղէններով ու մեղրով. յարգում եմ ձեր զաղանիքները և երբէք չեմ մերձենում ձեր քարայրներին. թողէք մնանեմ այստեղ, աղաչում եմ ձեզ։»

—

Բոնուսին իրաւունք տրուեցաւ մնալու, և երիտասարդ Հէրմանը, որ արդէն չափահաս էր դարձել, յայտնեց թէ ամենևին դաստիարակի կարօտութիւն չունի, և մենակ ճանապարհ ընկաւ Զիլլայի հետ։ Երբ պիտի անցնէին ապառաժների զարհուրելի անցքով ուր ոչ մի մարդ դրսից չէր համարձակել վտանգի մէջ դնել իւր անձը, նա կամեցաւ օդնել նորան մի դիւթութեամբ որ զլուխը պտոյտ չգայ։ «Ոչ, ասաց նա, ես ճանաչում եմ այս ճանապարհը, շատ անգամ անցել եմ այս տեղով, և վաղուց կարող էի փախչել։—Ուրեմն ինչին էիր սպասում, ասաց Զիլլան։ Հէրմանը ոչինչ չպատասխանեց։

—

Նա շատ նեղացաւ որ վհուկը այդպիսի հարց առաջարկեց իրան, Զիլլան պիտի գուշակէր որ յարգանքն ու սէրը միայն պահել էին նորան։ Վհուկը հասկացաւ Հէրմանի հպարտ լռութիւնը և սկսաւ տխրիլ իւր զոհաբերութեան վրայ. բայց ինքը վճռել էր արդէն այդ քայլը անել, և պէտք է շարունակէր ճանապարհը։ Երբ հասաւ այնտեղ ուր պիտի բաժանուէին միմեանցից, վհուկը տուաւ նորան այն ոսկին որ երբեմն գողացել էր դուքսի՝ նորա հօր մուսնատիկից և երեխային առաջարկել էր իբրև մի խաղալիկ։ Փոքրիկ Հէրմանը արհամարհել էր այն ժամանակ այդ աղնիւ մետաղը, և այս անգամ էլ ժպտալով ու առանց բաւականութեան ընդունեց։

—

«Ձեզ կարող չընդունել այս գրաւականը, ասաց Զիլլան։ Այստեղ իրաւունք չեմ ունենալ ոչինչ առնելու ինչ որ քոնը չէ, այլ ստիպուած կը լինիս պահպանել փոխանակութեան պայմանները»։ Հէրմանը չհասկացաւ, որովհետև վհուկը արժանի չէր համարել ուսուցանել նորան մարդկային ընկերութեան օրէնքներն ու սովորութիւնները։ Արդէն շատ ուշ էր զգուշացնել նորան այն վտանգներից որ սպառնում էին նորան այս նոր աշխարհում։ Հէրմանն էլ ակամէ չէր գնում նորան, նա յափշտակուածի պէս էր, վասն զի հոգին անհամբերութեամբ սպասում էր ազատուել թռչելու. բայց նորա յափշտակութիւնը դառնութեամբ լի էր, և նա իւր արտասուքները զսպում էր։

—

Նոյն րոպէին եթէ վհուկը ասած լինէր նորան՝ «Կամենում ես վերադառնալ ինձ հետ,» նա կը սիրէր ու կ'օրհնէր նորան. բայց Զիլլան իւր սիրտը զգոյշ էր պահում ամէն տեսակ թուլութիւնից, նորա աչքերի աղբիւրակները ցամաք էին և բերանի խօսքը սառն։ Հէրմանը զգում էր որ մի ուրուական էր սիրել, և զսպելով իրան՝ հրաժարական տուաւ Վհուկին։ Երբ Զիլլան անյայտացաւ, Հէրմանը նստաւ, արտասուքների կաթիլները թափում էին նրա աչքերից։ Զիլլան յետ նայեցաւ, տեսաւ և քիչ էր մնում որ ձայն տար նորան. բայց ճակատագիրը վճռել էր որ բաժանուի նորանից, որովհետև չկարողացաւ երջանկացնել նորան։

—

Բ.

Այնու ամենայնիւ երբ Զիլլան մտաւ հովիտը, նորան այնպէս էր թվում թէ ամէն բան փոխուել է, օդը առաջուան պէս մաքուր չէր, ծաղիկները առաջուան պէս գեղեցիկ չէին, ամպերը առաջուան պէս փայլուն չէին։ Նա շատ զարմացաւ որ չէ կարողանում Հէրմանին մոռանալ և շատ դիւթութիւններ արաւ մոռացումը հանդէս բերելու։ Բայց մոռացութիւնը չեկաւ, և վհուկը այնպիսի տխուր մտածութիւնների անձնատուր եղաւ որ երբէք չէր սպասում։ Նա ծածկեց իւր քոյրերից ու թագուհուց իւր տրտմութիւնը, և զուր աշխատեց զսպզոն աստղերի տակ երգելով ու ցողի մէջ պար գալով առաջուան ուրախութիւնը գտնել։

—

Շաբաթներ ու ամիսներ անցան, և ձանձրութիւնը չհեռացաւ նորանից։ Սկզբումը նա կարծում էր թէ Հէրմանը կը վերադառնայ. բայց նա չվերադարձաւ, և վհուկը սկսաւ անհանգիստ լինել նրա մասին։ «Քեզ ինչ փոյթ, ասաց թագուհին, թէ ինչ վիճակի է հանդիպել։ Գուցէ նա մեռած է; և դու պիտի ցանկանաս որ այդպէս էլ լինի։ Մահը ամէն յիշատակ ջընջում է. «Զիլլան զգաց որ մահ բառը վշտի պէս ծանրանում էր վրան, և զարմանալով ասաց թագուհուն. «Ինչի՞ չգիտենք թէ ուրեն գնում հոգիները մահից յետոյ։

—

—Զիլլա, պատասխանեց թագուհին, մի խորհիր այդ բանի վրայ, որ մեզանից միշտ ծածուկ կը մնայ. մարդիկ չեն յայտնել մեզ այդ գաղտնիքը։ Նոքա էլ այն ժամանակ են իմանում երբ կեանքից բաժանվում են, իսկ մենք որ չենք մեռնում, չենք կարող իմանալ կամ գուշակել թէ ուր են գնում մարդկանց հոգիքը, ոչ էլ յուսալ թէ երբէք կը միանանք նոցա հետ։—Ուրեմն այս աշխարհը պէտք է յաւիտեան մնայ, և մենք դատապարտուած ենք երբէք չտեսնել ու չունենալ ուրիշ բան։—Այս է մեր ընդունուած օրէնքը, քոյր իմ։ Մենք պիտի ապրինք որքան կ'ապրի երկիրը, և եթէ նա կորչելու է, մենք էլ նորա հետ կը կորչինք։

—

—Ո՛վ թագուհի, և միթէ մարդիկ երկրից յետոյ էլ պիտի ապրին։—Նոցա հոգիքը երբէք կորչելու չեն։— Ուրեմն իսկապէս անմահ նոքա են, իսկ մենք անցողական ենք յաւիտենական անդունդի մէջ։—Ճշմարիտ է, Զիլլա, և մենք այդ իմանում էինք երբ բաժակը խմեցինք. միթէ դու մոռացել ես։—Այն ժամանակ հատակ փոքր էր, և մահուան յաղթելու փառքը աչքերս չլացրեց։ Նորանից յետոյ ես էլ ուրիշների պէս էի մտածում. ապագան ոչինչ նշանակութիւն չունեցաւ ինձ համար, յաւիտենականութիւնը պարունակվում էր, իմ կարծիքով, ներկայի մէջ։

—

—Ո՞րտեղից է ծագում այսօր այդ չփոթութիւնդ, ասաց Թագուհին, որ խոստովանում ես ինձ և այդ հետաքրքրութիւնդ որ յուզում է քեզ։
—Ես ինքս էլ չգիտեմ, պատասխանեց Զիլլան։ Եթէ ես իմանայի ցաւինչանակութիւնը, կ՚ասէի քեզ թէ վարակուած եմ նորանով։» Հաղիւ թէ այս բառերը արտասանեց որ արտասուքները թրջեցին Զիլլայի անարատ աչքերը, և Թագուհին խորին զարմացմամբ նայում էր նրա վրայ։ «Ես առաջուց գուշակել էի որ 'կը զղջաս երեխայից բաժանուելուդ վրայ. բայց քո տրտմութիւնը իմ սպասածից աւելի է։ Պէտք է որ մի դժբաղդութիւն եկած լինի Հէրմանի գլխին, և այդ դժբաղդութիւնը ահա ծանրանում է քեզ վրայ։

—

—Թագուհի, ասաց մատաղահաս վհուկը, ես կամենում եմ իմանալ թէ ինչ եղաւ Հէրմանը,» և երկուսն էլ սկսան դիւթիւններ անել։ Զիլլան կախարդական եռոտանիի բուրմունքներից յափշտակուած՝ թեքեց իւր գլուխը իբրև մի թառամած շուշան և մի տխուր տեսարան բացուեցաւ նրա առաջ։ Տեսաւ Հէրմանին մի բանդի խորքում։ Խաբեբայ ու խարդախ մարդիկ զրկել էին նորան իւր դրամից։ Քաղցած մնալով՝ նա զողացաւ մի քանի պտուղներ, և ներկայացաւ դատաւորին որ չկարողացաւ հասկացնել նորան թէ երբ մարդ ուտելու բան չունի, պէտք է աշխատի կամ մեռնի։

—

Այս տեսարանին յաջորդեց մի ուրիշը։ Հէրմանը չհասկանալով մարդկային արդարութիւնը, նորից բերուեցաւ դատաւորի առաջ, որ դատապարտեց նորան փայտով ծեծուիլ և իշխանանիստ քաղաքից արտաքսուիլ։ Պատանին զայրացած յայտնեց այն ժամանակ թէ ինքը հանդուցեալ դուքսի որդին է, իշխող դուքսի անդրանիկ եղբայրը, օրինաւոր ժառանգ այն թագի որ գրաւել էր իւր եղբայրը։ Զիլլան կարծեց թէ ահա փրկուեցաւ։—Վերջապէս ճշմարտութիւնը յաղթող կը հանդիսանայ, մտածեց նա։ Նա իշխանական գահի վրայ կը նստի, և որովհետև նա մեր ձեռքին իմաստուն ու արդարադատ դարձաւ, հպատակները կը յարգեն ու կը սիրեն նորան։

—

Բայց մի ուրիշ տեսարանի մէջ ցոյց տուեց նորան Հէրմանին ամբաստանուած խաբեբայութեան ու ապստամբութեան մէջ, և իմաստ դատապարտուած։ Ցանկարծ վհուկի ականջին հնչեցին այս բառերը. Վաղուան համար է։ Որքան էլ ճարաար կախարդ լինէր նա, չէր կարող իւր մարմինը մտքի արագութեամբ տեղափոխել։ Եթէ վհուկները կարող են անցնել մեծ տարածութիւններ, պատճառն այն է որ չեն յոգնում. բայց ամէն բանի համար ժամանակ է հարկաւոր, և առաջին անգամ էր որ Զիլլան իմացաւ գնահատել ժամանակը։

—

«Ցուր ինձ թեւեր,» ասաց նա Թագուհուն. բայց Թագուհին այդ բանը չէր հնարել։ «Հրամայէ՛ որ մի արագասահ ամպ տանէ ինձ.» բայց ոչ մարդիկ և ոչ վհուկները չէին հնարել այդ։ «Թող քամին տարածութիւնը ճեղքելով տանէ ինձ։—Դու ինձանից անկարելին ես պահանջում, ասաց Թագուհին։ Ճանապարհ ընկիր շուտ և յոյսդ միայն քեզ վրայ դիր։» Զիլլան ճանապարհ ընկաւ, թռաւ հեղեղը և կայծակի արագութեամբ տարուեցաւ. բայց երբ դաշտունքը հասաւ, ջուրը խաղաղացաւ, և վհուկը լաւ համարեցաւ վազել։

—

Նա այնքան թեթև էր որքան մի վհուկ կարող է լինել, բայց ստիպուած չէր եղել շտապել, որովհետև մարդկանց բնական գործունէութեանը անծանօթ էր եղել։ Նա տեսաւ որ հասարակ մահկանացուները որ գնում էին քաղաք խաբեբայ Հէրմանի կախուելը տեսնելու՝ իրանից առաջ էին անցնում։ Վիրաւորուելով որ զանդաղ գիւղացիք իրանից առաջ էին անցնում, նշմարեց մի ձիաւոր ու թռաւ նրա ձիու վրայ։ Ձիաւորը հիացաւ վհուկի գեղեցկութեամբ, բայց շուտով էլ չտեսաւ նորան և կարծում էր թէ տեսածը երազ է։

—

Սակայն ձին զգում էր նորա ներկայութիւնը, որովհետև գրգռում էր նրան վազելու, և կենդանին զարհուրած՝ երկու ոտի վրայ կանգնեցաւ ու վայր ձգեց իւր տիրոջ։ Վհուկը իւր կրունկը մղեց ձիու կողը, և կենդանին սկսաւ այնպիսի կատաղութեամբ վազել որ երբ քաղաքի դռների մօտ հասաւ, ընկաւ անշնչացաւ։ Զիլլան վերցրեց ձիաւորի վերարկուն որ թամբի վրայ կապած մնացել էր, և սպրդեցաւ ամբոխի մէջ որ խռնվում էր կախաղանի շուրջը։

—

Ժողովուրդը կատաղած էր ու անէծքներ էր թափում, որովհետև յայտնել էին նորան թէ խաբեբայ Հէրմանին յաջողել էր բանդից փախչել։ Նա կամենում էր որ նրա տեղ բանդապետին և նոյն իսկ դահիճին կախ տային, որ զրկում էր նորան խոստացուած տեսարանից։ Ոստիկանութեան գլխաւորը երևեցաւ պատշգամի վրայ և ամբոխին հանդարտեցրեց ասելով. «Խաբեբայ Հէրմանը դեռ չբռնուեցաւ, այնու ամենայնիւ խոստացուած տեսարանը կը ներկայացնեն ձեզ։»

—

Եւ մուսնետիկները աղաղակեցին հրապարակի չորս կողմը. «Այս բոպէիս կախուած կը տեսնէք այն աւազակին որ դատապարտուածին փախցրեց։» Ամբոխը ծափ տուեց, և դահիճը պատրաստեց իւր պարանը։ Զոհը բերուեցաւ, և վհուկը մի զարմանալի բան տեսաւ։ Հէրմանին փրկողը ոչ այլ ոք էր եթէ ոչ պատուելի Բօնուսը, որ հանդարտ առաջ էր գալիս հոգին յանձնելով Աստուծոյ. «Ահա ինչ տեղ ընկայ, ասաց նա վհուկին, որ մօտեցաւ նորան. ես լաւ չէի հսկել իշխանի մանկութեան վրայ, և դատապարտել էին ինձ կրակի վրայ այրելու, այսօր փրկում եմ նորան, և ինձ համար պարան են պատրաստել։ Այս էր իմ ճակատագիրը։»

—

Պատուելի Բօնուսը, իւր աչակերտի հեռանալուց յետոյ, ձանձրացել էր վհուկների թագաւորութեան մէջ։ Նա ամաչել էր վերջապէս ծոյլ ու անգործունեայ կեանքից. բացի սորանից նա մտածել էր որ Հէրման իշխանը տէրութեան օրինաւոր ժառանգը լինելով կը փրկէ նորան փայտակոյտից։ Օգուտ քաղելով այն հանգամանքից որ վհուկները մոռացել էին նորան իւր անապատում, և կարողացել էր անճանաչելի կերպով մտնել քաղաք իւր կանացի հագուստների մէջ ծպտած։ Այնտեղ իմանալով որ իշխանը բանդարկուած է, գնացել էր իշխող դուքսի մօտ։

—

Բօնուսը երդուել էր որ Հէրմանը նորա եղբայրն է, և դուքսը թոյլ էր տուել նորան փորձ փորձել Հէրմանին բանդից փախցնելու, այն պայմանով որ երկուսն էլ վերադառնան վհուկների մօտ և չվրդովեն իւր երկրի խաղաղութիւնը։ Բօնուսը փրկել էր Հէրմանին տալով նորան իւր շրջազգեստն ու գլխարկը։ Նա մնացել էր իշխանի տեղ բանդում, յուսալով թէ անվնաս կը մնայ իշխող դուքսի անցաթուղթը ցոյց տալով. բայց այնքան շտապել էր հագուստը փոխելու որ անցաթուղթը թողել էր իւր շրջազգեստի գրպանում։

—

Եւ առանց իմանալու, Հէրմանը գնում էր այն թղթով, մինչև միւս կողմից պատրաստվում էին Բօնուսին կախել։ Զիլլան վճռեց փրկել ծերունուն, և մատները թրխկացնելով կայծակնահար արաւ դահճին, որ հարբածի պէս ընկաւ և ամբոխի աղաղակները չկարողացան զարթեցնել նորան։ Պահապանները որոնք կամեցան ձեռք դնել վհուկի ու դատապարտուածի վրայ քարացած մնացին, և ովքեր որ կամեցան նոցա տեղը բռնել չկարողացան աղատուիլ այն թմրութիւնից որ կախարդը ձգեց նոցա վրայ։

—

Նա տարաւ ծերունուն մի անտառ ուր հանդստանալով ցոյց տուեց նորան Հէրմանի բռնած ճանապարհը, որ անվտանգ էր, մանաւանդ որ անցաթուղթը հետն ունէր։ «Գնանք որոնենք նորան», ասաց Զիլլան և շուտով ճանապարհ ընկան։ Մի քանի օր մանդալուց յետոյ, վերջապէս գտան նորան մի հարևան իշխանի երկրների վրայ, ուր նա փայտ էր կտրում ու ծախում օրական ապրուստը ճարելու համար։ Հէրմանը իւր բարեկամներին տեսաւ թէ չէ, կացինը մի կողմը ձգեց և կամենում էր հետևել նոցա։

—

Բայց նոյն րոպէին մի մատաղահաս աղջիկ կանգնեցրեց նորան լոկ հայեացքով. այդ հայեացքը բոլոր վհուկների հայեացքներից զօրաւոր էր։ Եւ սակայն նա մի խեղճ աղջիկ էր որ բոպիկ ոտներով ման էր գալիս և ծառայում էր փայտահատների գլխաւորի մօտ, որ իշխանին վարձել էր անտառում փայտ կտրելու։ Ամէն օր աղջիկը գլխին դրած բերում էր ջուր ու հաց որ Հէրմանը ուտում ու խմում էր կէսօրին։ Նոյն կերպով գնում

էր նա ծառայելու անտառում ցրուած միւս փայտահատներին և երբէք չէր կանգնում նոցա հետ խօսելու։

—

Հազիւ մի քանի խօսքեր փոխանակել էր նա Հէրմանի հետ, բայց նոցա աչքերը խօսել էին միմեանց հետ։ Աղջիկը զէղեցիկ էր ու համեստ։ Հէրմանը քսան տարեկան էր և դեռևս չէր սիրել։ Երեք օր կար միայն որ աղքատ Բէրթային սիրում էր, և երբ վհուկն ասաց նորան՝ «գնանք», Հէրմանը պատասխանեց. «Երբէք, բայց եթէ թոյլ տաս որ այս ընկերուհուս հետս տանեմ։—Դու միշտ խելագար պիտի մնաս, ասաց Զիլլան։ Հազիւ մի քանի օր անցկացրիր մարդկանց ընկերութեան մէջ, և նոքա կամեցան սպանել քեզ. այժմ կամենում ես նոցա երկնքի տակ սիրել։

—

—Ես ոչինչ չեմ կամենում, ասաց Հէրմանը։ Երեկ պատրաստ էի կախաղանի վրայ մեռնելու, և անիծում էի իմ ցեղը. իսկ այսօր սիրում եմ այս աղջկան և զգում եմ որ մարդկութիւնը իմ գերդաստանն է։—Ձեռ տեսնում, վրայ բերեց վհուկը, որ դու այստեղ սարկութեան, աշխատութեան ու թշուառութեան մէջ պիտի ապրիս։—Ամէն չարիք կ'ընդունիմ, եթէ սիրուելու բաղդաւորութիւն ունենամ։» Զիլլան մի կողմ կանչեց մատաղահաս աղջկան և հարցրեց նորան թէ կամենումէ Հէրմանի ընկերուհին լինել։ Նա կարմրեցաւ ու ոչինչ չպատասխանեց. «լաւ մտածէ, ասաց նորան վհուկը, նորա թագաւորութիւնը առանձնութիւն է։»

—

Բէրթան հարցրեց թէ արդեօք աքսորուած է։ «Ցմահ, պատասխանեց վհուկը։—Բայց միթէ դուք նորա հարս չէք։» Մի արհամարհական ժպիտ երևեցաւ վհուկի դէմքի վրայ։ «Ներեցէք ինձ, ասաց Բէրթան, կամենում էի իմանալ թէ միայն ինձ է սիրում։ Վհուկը նկատեց որ իւր զեղեցկութիւնը Բէրթայի սրտում նախանձ ձգեց, և մի հպարտ ուրախութիւն զգաց. իսկ մատաղահաս աղջիկը արտասուեց, և Հէրմանը մօտենալով ասաց վհուկին. «Ինչի ես լացացնում իմ սիրուհուն։ Եթէ չես կամենում որ ինձ հետ գայ, ինչպէս ես կարծում թէ կը հետևիմ քեզ։

—

—Եկէք երկուսդ էլ, ասաց վհուկը. բայց եթէ ընկերուհուդ հետ էլ կը ձանձրանաս մեզ մօտ, էլ յոյս չունես իմ համակրութեան վրայ։» Այս խօսքի վրայ չորսն էլ ճանապարհ ընկան, որովհետև Բօնուսը կշտացել էր մարդկային ընկերութիւնից, և նոքա վերադարձան վհուկների հովիտը, ուր Հէրմանի ու Բէրթայի ամուսնութիւնը սրբագործուեցաւ թագուհուց, և ապա երիտասարդ ամուսինները գնացին բնակելու մի զեղեցիկ փայտաշէն տան մէջ որ Հէրմանը կառուցել էր իւր ընկերուհու համար։

—

Այն ժամանակ միայն տեսան վհուկները թէ ինչ զօրութիւն ունի սէրը երկու անարատ սրտերի մէջ, և թէ ինչ քաղցր երջանկութիւն էին վա-

յելում այս երկու պատանիները իրանց առանձնութեան մէջ։ Պատուելի Բօնուսը չտապեց իւր առաջուան կանայի հագուստները հագնել և առանձին հպարտութեամբ կատարում էր տանտիկնութեան պաշտօնը։ Բէրթան, պարզ ու հեզ կինամարդ, յարգում էր Նորան և անկեղծաբար հիանում Նորա խըմորեղէնների վրայ։ Իսկ Հէրմանը, մտաբերելով դաստիարակի անձնազոհութիւնը, ներում էր Նորան իւր որկրամոլութիւնը և բարեկամութեան նշաններ ցոյց տալիս։

—

Նա մեծ եռանդով աշխատում էր երկիրը մշակելու և իւր ընտանիքի համար կեանքի ամենաքաղցր պայմանները պատրաստելու, որովհետև շուտով նա մի տղայ ունեցաւ, յետոյ երկու, և ապա մի աղջիկ, և ամէն անգամ որ Աստուած մի նոր ընծայ էր պարգևում, նա աշխատանքը կրկնապատկում, կալուածը զարդարում էր։ Բէրթան իւր հեզութեամբը դրաւել էր Զիլլայի և բոլոր մատաղահաս վհուկների համակրութիւնը. մինչև անգամ Զիլլան սկսեց Բէրթային Հէրմանից աւելի սիրել, իսկ երեխաներին երկուսից էլ աւելի։

—

Զիլլան անճանաչելի էր երբ այդ երեխաների մօտ էր։ Ուրիշից սիրուելու ցանկութիւնը այնքան դրաւել էր Նորան որ միտքը անարդար փափաքներով պղտորուել էր։ Մի օր նա ասաց Բէրթային. «Ցուր ինձ քո աղջիկը. ես ցանկանում եմ ունենալ մի հոգի որ միայն իմը լինի։ Հէրմանն երբէք չէ սիրել ինձ, չնայելով որ այնքան լաւութիւններ եմ արել Նորան։ —Սխալվում էք, տիկին, պատասխանեց Բէրթան. նա ցանկացած կը լինէր իւր մօր պէս սիրել ձեզ, դուք էիք որ չէիք սիրում Նորան ձեր որդու պէս։

—

—Չէի կարող սիրել Նորան այդ տեսակ սիրով, կրկնեց վհուկը, որովհետև զգում էի թէ նա մի բան ափսոսում էր, կամ ձգտում էր մի այնպիսի սիրոյ որ չէի կարող ներշնչել Նորան. բայց քո աղջիկը դեռ չէ ճանաչում քեզ, նա ափսոսալու բան չի ունենալ։ Ես կը տանեմ Նորան մեր նուիրական օթևանները՝ ուր միայն ինձ կը տեսնէ, և Նորա սիրտն ու միտքը ամբողջապէս դէպի ինձ դարձած կը լինին։—Եւ կը սիրէք Նորան ինչպէս որ ես եմ սիրում, ասաց Բէրթան, որովհետև դուք միշտ սիրոյ վրայ էք խօսում, առանց երբէք փոխադարձ սէր խոստանալու։

—

—Ի՞նչ փոյթ թէ կը սիրեմ կամ ոչ, ասաց վհուկը, եթէ ես կը բաղդաւորեմ Նորան։—Երդուեցէք սիրելու Նորան քնքշութեամբ, աղաղակեց Բէրթան, ապա թէ ոչ երդվում եմ որ երբէք չեմ տալ ձեզ իմ դաւակը։» Վհուկը զայրացած գնաց գանգատելու թագուհուն։ «Այդ արարածները անմիտ են, ասաց նա թագուհուն. Նոքա չեն հասկանում թէ ինչ ենք մենք իրանց համար։ Նոքա ամէն բանով պարտական են մեզ. ապահովութիւնը, առատութիւնը, գիտութեան ու մտքի բոլոր բարիքները մեզանից են ստացել, և սակայն ոչընչով չեն յայտնում իրանց երախտագիտութիւնը։ Գուցէ մեզանից երկնչում են, բայց չեն կամենում անպայման սիրել մեզ։

—

Զիլլա, ասաց թագուհին, այդ արարածները իրաւունք ունին։ Նոցա ամենագեղեցիկ ու ամենաթանգ սեպհականութիւնը սիրոյ պարգևն է, և լաւ են զգում որ մենք զուրկ ենք այդ բարիքից։ Մենք որ արհամարհում ենք նոցա, ուրիշների մէջ սէր յարուցանելու կարիքը զգում ենք, այդ կարիքը տանջում է մեզ, և ժամանակաւոր երջանկութիւնը վրդովում է մեր անմահութեան խաղաղութիւնը։ Եւ ինչի՞ ենք գանգատում. մենք կամեցանք ազատ մնալ մահուան խիստ օրէնքներից, այժմ պէտք է որ ազատ լինինք կեանքի քաղցր օրէնքներից, և այս է պատճառը որ խորին տրջանք ենք զգում որ չենք կարող բառերով արտայայտել։

—

—Ով իմ թագուհի, ասաց Զիլլան, դու այնպէս ես խօսում որ իբր թէ զգայիր այն տրջանքը որ այրում, մաշում է ինձ։—Երկար ժամանակ եմ զգացել այդ տրջանքը, պատասխանեց թագուհին. ինձ էլ մաշեց նա, բայց այժմ բժշկուած եմ։—Այսա ինձ գաղտնիքդ, աղաղակեց երիտասարդ վհուկը։—Չեմ կարող, Զիլլա. զարհուրելի է այդ գաղտնիքը և մի մեծ սարսափ կը բերէր քեզ վրայ։ Համբերութեամբ տար վշտիդ և աշխատէ ցրուել Նորան։ Ուսումնասիրէ աստղերի ընթացքը և խորհրդաւոր տիեզերքի հրաշալիքը. մոռացիր մարդկութիւնը և մի յուսար երբէք բարեկամութեան կապ հաստատել Նորա հետ։»

—

Զիլլան զարհուրած քաշուեցաւ, բայց թագուհին շուտով տեսաւ որ ուրիշ մատաղահաս վհուկներ գալիս են մօտը մի և նոյն գանգատներով և հրաման են խնդրում Նորանից գնալ մարդկանցից երեխաներ գողանալու։ «Հէրմանն ու Բէրթան չատ բաղդաւոր են, ասում էին նոքա։ Նոքա ունին փոքրիկ էակներ որ միայն իրանց ծնողներին են սիրում, և որոնք գողալով են շնորհում մեզ իրանց ժպիտներն ու գգուանքները։ Հէրմանն ու Բէրթան չեն նախանձում մեզ, այն ինչ մենք նախանձում ենք նոցա երջանկութեանը։

—

—Ամօթ է մեզ համար, ասաց Բէգիսը, որ ամենից չատ զայրացած էր։ Մենք ընդունեցինք այդ տկար ու ապականացու էակներին որ նոցա թշուառութիւնը մեր երանութեան հետ բաղդատելու զուարճութիւն ունենանք, որ ծիծաղինք նոցա տկարութեան ու անտաչութեան վրայ, միով բանիւ որ զուրաճանանք նոցանով փոխանակ մեր շնորհած բարիքներին, որոնք մեր զօրութեան արտօնութիւնն ու մխիթարութիւնն են, և ահա նոքա խրոխտանում են մեզ վրայ ու մեզանից գերազանց են համարում իրանց որովհետև երեխաներ ունին և սիրում են նոցա։

—

«Այնպէս արա որ մենք էլ սիրենք նոցա, ով թագուհի, դու որ մեզ չնորհեցիր անմահութիւնը։ Եթէ մեզանից իմաստուն ու գիտուն ես, ցոյց տուր այսօր քո առաւելութիւնը՝ փոփոխելով մեր բնութիւնը, որ անկատար ես թողել։ Ձեռ առ մեր արտօնութիւններից մի քանիսը որոնցով զարդարել ես մեր հրաշալի իմացականութիւնը, և՝ սերմանէ մեր սրտերի մէջ սիրոյ գանձերը որանցով՝ մահկանացու էակները այնքան պարծենում են մեր առաջ։»

—

Պառաւ վհուկները եկան իրանց կարգին ու յայտնեցին թէ պատրաստ՝ վում են թողնել այդ թագաւորութիւնը, եթէ թագուհին Հէրմանի գերդաստանը չհալածէ, որովհետև նոքա տեսնում էին որ այդ մահկանացուի սերունդը ժամանակով պիտի բռնէ ողջ հովիտն ու սարը, պիտի մշակէ երկիրը, պիտի խորտակէ ժայռերը, պիտի կապէ ջրերի ընթացքը, պիտի գրգռէ, կոտորէ կամ ընտելացնէ վայրենի կենդանիները, պիտի հալածէ լռութիւնը, պիտի ոտնակոխ անէ կոյս անապատը, որով իմաստուն ու պատկառելի վհուկներին անկարելի պիտի լինի իրանց հանդէսներն ու խորհուրդները կատարել։

—

«Եթէ ձեզ ախորժերի է այդ պիղծ ցեղի հետ խնամութիւն անել, ասաց պառաւ Տրօլլիան մատաղահաս վհուկներին, մենք չենք կարող ընդդիմանալ ձեզ. բայց մենք իրաւունք ունինք բաժանուիլ ձեզանից և գնալ որոնել մի ուրիշ անմատչելի օթեան, ուր կը մոռանանք մարդկանց գոյութիւնը և կ՝ապրենք մեզ համար միայն, ինչպէս որ վայել է զերազոյն էակների։ Իսկ ձեր թագուհուն, շարունակեց նա մի սպառնալի հայեացք ձգելով Նորա վրայ, կարող էք ձեզ մօտ պահել եթէ կամենում էք, իսկ մենք մերժում ենք նորա օրէնքները և պատերազմ ենք հրատարակում Նորան։»

—

Մատաղահաս վհուկները վեհանձնաբար պաշտպանեցին թագուհու իշխանութիւնը։ Նոքա որ ոչ պառաւ էին և ոչ երիտասարդ, անջատուեցան, և ժողովը այնպիսի մրրկալի կերպարանք ստացաւ որ եղջերուները ահից փախան հովտի միջով, և Բէրթան ժպտալով ասաց Հէրմանին. «Լսում ես այն խեղճ վհուկների աղաղակները, նոքա դառում են որոտումի պէս և մռնչում մրրկի պէս։ Նոքա կարողանում են իրանց բոլոր հաճոյքներին բաւականութիւն տալ, բայց չգիտեն մեզ պէս բաղդաւոր լինել։ Եթէ շարունակեն այսպէս կռուել միմեանց հետ, սարն էր փուլ կը գայ։

—

Հէրմանը անհանգիստ էր լինում Զիլլայի համար, որին նա անկեղծօրէն սիրում էր, թէև վհուկը այդ բանը չէր հասկանում։ «Գիտեմ թէ ինչ միջոց կարող են հասցնել Նորան, ասաց նա, ես տեղեակ չեմ նոցա բոլոր գաղտնիքներին. բայց կը կամենայի որ պատսպարուի այդ փոթորկից։—Գնա բեր Նորան, ասաց Բէրթան։ Ա՛խ, երանի թէ հասկանար թէ որքան սիրում ենք Նորան։ Բայց Նորա դժբաղդութիւնն այն է որ ուրիշների սրտի վրայ այնպէս է խօսում ինչպէս մի խլուրդ կը խօսէր աստղերի վրայ։ Աշխատէ հանգստացնել Նորան, և ասա որ եթէ կամենայ մեզ հետ ապրել, կը տամ Նորան երբեմն իմ երեխայքը՝ ձանձրութիւնը փարատելու համար։

—

«Վհուկներին երբեմնակի տալով բան չի լինիլ, մտածեց Հէրմանը. Նոքա եթէ մի բան ուզում են՝ էլ յետ չեն դարձնում։» Նա բարձրացաւ սարը և մօտից լսեց աղմկալի ժողովի աղաղակները. զօրութեան և իմաստութեան պաշտօնին նուիրուած հոգիքը բոլորը միասին մի փոփոխութիւն էին պահանջում, և չէին կարող իրարու հետ համաձայնիլ։ Թագուհին անյողդողդ ու լուռ՝ թոյլ էր տալիս որ իւր շուրջը տարուբերուին, նման այն տերևներին որոնց քամին բարձրացնում է օդը։ Նոքա խօսում էին խորհրդաւոր լեզուով, և Հէրմանը չկարողացաւ հասկանալ թէ ինչ էին ասում։

—

Արևը մայր էր մտել, բայց վհուկները դեռ տատանում էին անապատում, ոմանք ցնորական թռոյցքով բարձրանում էին բարձր ապառաժների վրայ խռովութեան վրայ խլխելու և լսելի լինելու համար, ուրիշները ժայռերի ներքնակողմներն էին նստած խորհրդակցելու կամ միմեանց գրգռելու համար։ Ասես թէ այնպիսի չարաժողովներից մինն էր որ ծիծեռնակներին տների կտուրների վրայ են պահում, երբ նոքա պատրաստ են արդէն իրանց նշանակեալ ճանապարհը գնալու։ Հէրմանը որոնեց Զիլլային այդ բազմութեան մէջ և տեսաւ որ այնտեղ չէ։

—

Նա մտաւ լերան՝ խաւար խորշերում և անցաւ գնաց պորփիւրեան քարայրը ուր գիտէր թէ Զիլլան դիմում է յաճախ։ Նա այնտեղ չէր։ Առաջ գնաց նա այն հեռաւոր տեղերը ուր ծաղկում են երկնակապոյտ ծաղիկներ. այնտեղ գտաւ Զիլլային գետնի վրայ տարածուած, մի անդունդի ափին՝ ուր սահում դլորվում է մի ջրվէժ։ Գեղեցիկ վհուկը թուլացած ընկել էր քարաժայռի վրայ և այդ բոպէին կարծես անդունդ ջրի հետ գլորուելու էր բերանաբաց վիհը։

—

Մի ակամայ երկիւղ տիրեց Հէրմանի սրտի վրայ. կայծակի արագութեամբ թռաւ, գրկեց Զիլլային և այն զարհուրելի տեղից հեռացրեց։ «Այդ ինչ ես անում, ասաց նա տխուր ժպիտը երեսին. մոռանում ես որ եթէ ես մահը որոնէի, նա չէր ընդունիլ ինձ։ Եւ ինչի է այդ մեծ չփոթութիւնդ, եթէ չես կարող սիրել ինձ։—Մայր, . . . ասաց Նորան Հէրմանը։—Զիլլան ընդհատեց Նորա խօսքը. «Երբէք ոչ ոքի մայր չեմ եղել և չեմ լինիլ։—Եթէ վիրաւորում եմ քեզ այդ անունը տալով, ասաց Հէրմանը, ուրեմն չես հասկանում այդ սուրբ բառի նշանակութիւնը։

—

«Սակայն երբ մանուկ հասակումս արտասուք էի թափում Նորա համար որ ինձ աչխարհ բերեց և որին այլևս տեսնելու չէի, դու ինձ ասացիր թէ Նորա տեղը կը բռնես, և ամէն հնար գործ դրիր խօսքդ կատարելու համար։ Շատ անգամ եմ փորձել քո համբերութիւնը իմ ապերախտութեամբ ու թեթևամտութեամբ, բայց դու միշտ ներել ես ինձ, և միանգամ դուրս հանելուց յետոյ՝ կրկին ետեւիցս եկար ու յետ բերիր ինձ։ Չգիտեմ թէ ինչ է բաժանում մեզ միմեանցից, այդ գաղտնիքը իմ խելքից բարձր է. միայն մի բան կայ որ գիտեմ։

—

«Այդ բանը որ դու չես հասկանում, այն է որ եթէ ես կարող եմ քեզանից հեռու բաղդաւոր լինել, չեմ կարող քեզ ապաբաղդ տեսնել։ Դու ինձ յաճախ ասել ես թէ քո վիճակը անայլայլելի է, և ես հաւատացի քեզ։ Չկարողանալով ծառայել ու մխիթարել քեզ, ես ապրեցայ իմ գերդաստանի և ինձ համար. բայց եթէ խաբել ես ինձ, բայց եթէ ընդունակ ես մի ցաւ զգալու, մի անիրաւութիւն կրելու, մի ձանձրութիւն զգալու առանձնութեան մէջ, մի անիրագործելի ցանկութիւն կազմելու, ահա պատրաստ եմ մատնակից լինել քո վշտերին ու արտասուքներին։

—

«Գիտեմ որ ուրիշ բան չեմ կարող անել. ոչ այնքան գիտուն եմ որ կարողանամ քո ձանձրութիւնը փարատել, ոչ այնքան զօրաւոր՝ որ պաշտպանեմ քեզ անիրաւութեան դէմ, և եթէ քո անհուն ցանկութիւնը կամենում է հպատակեցնել տիեզերքն ու իշխել Նորա վրայ, ես, չնչին էակս, չեմ կարող տալ քեզ Նորան. իսկ եթէ որդիական սիրտ ես կամենում, ահա նուիրում եմ քեզ իմ սիրտը։ Եթէ նա չէ կարող արժանապէս գնահատել քո մեծութիւնը, գոնեա նա պաշտում է քո մէջ բնակած բարութիւնը, որ այնքան անարատ է որքան աստղերի մէջ պսպղող լոյսը։ Շատ անգամ եմ զգացել որ սէրը անծանօթ է քեզ, տեսայ նոյնպէս որ չգիտես թէ բռնակալութիւնն ու պատիժը որպիսի անպատուութիւններ են մարդկային արժանաւորութեան համար։

—

«Եւ եթէ քո մեծութիւնը երբեմն վիշտ է պատճառել ինձ, աւելի յաճախ զգացել եմ քո գթութեան ու անմոռոջ պաշտպանութեան քաղցրութիւնը։ Եւ միշտ, չնայելով իմ բնաւորութեան թոյլ ու պակասաւոր կողմերին, ինքս ինձ յանդիմանել եմ որ չեմ կարող արժանապէս սիրել քեզ, Զիլլա, և այդ քեզ համար ոչինչ է։ Եթէ իմ նմանը լինէիր, կ՚ասէի քեզ. կամենում ես իմ կեանքը։ Բայց մարդու կեանքը չնչին է Նորա համար որ տեսել է ամբողջ սերունդների անկումը ժամանակի անդունդի մէջ։

—

«Ուրեմն, որովհետև ոչինչ չունիմ որ արժանի լինէր նուիրուելու քեզ, ընդունէ իմ տկարութեան դառն խոստովանութիւնը և թող մոռանալ տայ քեզ իմ ոչնչութիւնը։ Միայն բեր այն չունը որ ես սիրում էի մանկութեան

օրերումս. նա չէր կարող հետս խօսիլ, չէր հասկանում իմ տրտմութիւնը և երբ յիմարաբար պատմում էի Նորան իմ վշտերը մի մխիթարութիւն գտնելու համար, այնպիսի աչքերով էր նայում վրաս որ կարծես ասում էին ինձ. «Ներիր ինձ որ չգիտեմ թէ ինչ ես խօսում։»

—

«Նա կը կամենար անշուշտ իմ հոգու նման հոգի ունենալ, որպէս զի իմ վշտերին մատնակից լինի. բայց նա միայն աչքերով էր խօսում ինձ հետ, և երբեմն կարծես արտասուքները թրջում էին նոցա։ Ես էլ պատրաստ եմ քեզ համար արտասուելու, Զիլլա։ այդ արտասուքները ապացոյց են իմ տկարութեան որ դու չպէտք է արհամարհես, դոքա բարեկամութեան տխուր արտայայտութիւնն ու դերագոյն ճիգն են, այնպիսի բարեկամութեան՝ որ մարդկային բանականութեան սահմանից չէ կարող անցնիլ և որ տալիս է քեզ բոլորը ինչ որ կարող է տալ։

—

—Սուտ ես ասում, պատասխանեց Զիլլան. ես խնդրեցի քո զաւակներից մինը, կինդ մերժեց իմ առաջարկութիւնը, և դու էլ ահա դատարկաձեռն գալիս ես ինձ մօտ։ «Հէրմանը մի սարսուռ զգաց սրտի մէջ, բայց զսպեց իրան։ «Անկարելի է, ասաց նա, որ մի այդպիսի չնչին ցանկութիւն պատրաստէ քո հոգու հանդարտութիւնը։—Ա՛խ, յետ ես քաշվում արդէն, աղաղակեց վհուկը, և հակառակում ես քո խօսքերին։ Դու պնդում էիր թէ պատրաստ ես կեանքդ նուիրել ինձ, և այժմ պակաս բան եմ խնդրում...— Շատ աւելի ես պահանջում, վրայ բերեց Հէրմանը։

—

—Լաւ է ասես թէ երկնչում ես Բերթայի արտասուքներից ու յանդիմանութիւններից։ Միթէ չես իմանում որ քո աղջիկը բաղդաւոր կը լինի ինձ հետ. եթէ հիւանդանայ, կը բժշկեմ Նորան. եթէ անհնազանդ լինի, քաղցրութեամբ կը հնազանդեցնեմ Նորան. եթէ խելացի լինի, հանճարը կը լինի Նորա բաժինը, իսկ եթէ ոչ, այնպիսի քաղցր երազներ կը մատակարարեմ Նորան որ գիտութեան յայտնութիւններից ստոր չեն լինիլ։ Խոստովանիր ուրեմն թէ քո որդեսիրութիւնը եսական է, և թէ կամենում ես մարդկային եսականութեամբ կրթել Նորան։

—

—Մի ասեր ինձ այդ բաները, պատասխանեց Հէրմանը, ես ինքս էլ գիտեմ։ Գիտեմ որ եթէ մարդկային սէրը զոհողութիւններ անելու ընդունակ է, նա մի անոյշ ժամանակ եսական է, այդ սիրոյ յատկութիւնն է. բայց դու այդպիսի սիրով էլ չես սիրելու իմ աղջկան։ Սակայն փոյթ չէ, գիտեմ որ դու վիշտ չես կարող տանել, և եթէ Նորա դժբաղդութեանը ականատես լինիս, յետ կը դարձնես ինձ իմ զաւակը։ Դու խօսում ես Նորա մօր արտասուքների մասին. այո, զգում եմ որ այդ արտասուքների ջերմ կաթիլները այրում են սիրտս. բայց ասա նոյնպէս թէ քո սիրտը վառ է

այն մայրական անյաղ ցանկութեամբ որ քեզ այդպիսի յամառութեամբ խօսեցնում է, և ես կը զիջանիմ քո կամքը կատարելու։

—

—Չեմ տեսնում, ասաց վհուկը, թէ այն կէտին եմ հասել որ անիծում եմ իմ կեանքի անմահութիւնը, և թէ ճանձրութիւնը օրէցօր յուսահատեցնում է ինձ։ Չէ՞ որ դու պիտի բժշկես այդ հիւանդութիւնը, դու որ նորա սկզբնապատճառն ես եղել։ Այո, մանկութեանդ ժամանակ քեզ սիրելու փորձերը այնտեղ հասցրին ինձ որ այժմ սիրում եմ քո աղջկան։
—Ուրեմն սիրում ես նորան, աղաղակեց Հէրմանը։ Ո՛վ մայր, այս առաջին անգամն է որ արտաբերում ես այդ բառը։ Ամոլուած է դնում նորան քո շրթունքների վրայ, և իրաւունք չունիմ արգելելու որ թափանցի մինչև քո սիրտը։

—

«Կաց այստեղ մինչև գնամ զաւակս բերեմ։» Եւ առանց տատանելու կամ երկար մտածելու՝ վազելով ցած գնաց դէպի իւր բնակարանը։ Բէրթան աղջկան բազուկների մէջ գրկած քնում էր։ Հէրմանը հանդարտութեամբ վերցրեց երեխային, փաթաթեց մի փափուկ մորթիով և ոտի մատների վրայ դուրս եկաւ. բայց հազիւ թէ կոխել էր դրան շէմքը, որ մայրը կատաղաբար դուրս յարձակուեցաւ, կարծելով թէ վհուկը յափշտակում էր իւր աղջկան։

—

Երբ իմացաւ թէ ինչ է կամենում անել Հէրմանը, արտասուք ու յանդիմանութիւն իրարու վրայ թափուեցան. բայց Հէրմանն ասաց նորան. «Մեր մեծ բարեկամուհին կամենում է սիրել մեր զաւակը, և մեր աղջիկը որ հազիւ ճանաչում է մեզ, թշուառ չի լինիլ նրա հետ։ Նորան անծանօթ կը մնան այն վշտերն ու յիշատակները որ երբեմն տանջել են ինձ այստեղ։ Պէտք է այս զոհաբերութիւնը անել երախտագիտութեանը, սիրելի Բէրթա։ Մենք ամէն ինչ պարտական ենք վհուկին, նա է փրկել իմ կեանքը, նա է շնորհել ինձ քեզ, և եթէ մենք մեռնէինք, նա կը հոգար մեր որբերի պիտոյքը։

—

«Նա մեզ համար տեսանելի նախախնամութիւն է։ Երախտագիտութիւնը պահանջում է մեզանից այդ զոհը։» Բէրթան չհամարձակեցաւ ընդդիմանալ. նա ասաց Հէրմանին. «Ցար չուտ իմ դանձը, հեռացրու նորան աչքից, գնա. եթէ միայն մի համբոյր տայի նորան, չէի կարող բաժանուիլ նորանից։» Հազիւ թէ Հէրմանը մէկ—երկու քայլ առաջ էր գնացել, որ Բէրթան վազեց նորա ետևից, համբուրեց երեխային և փռուեցաւ գետնի վրայ, երեսը ծածկելով հերարձակ մազերով հեծեծանքները խեղդելու համար։ «Ա՛խ, անգութ վհուկ, աղաղակեց Հէրմանը յաղթահարուած, ոչ, չեմ տալ քեզ իմ զաւակը։

—

—Ա՞յդ է քո տուած խօսքը, ասաց Զիլլան, որ ծածուկ հետևել էր նորան և ապշած նայում էր նորա ու Բէրթայի յուսահատութեան վրայ. երկչէր իմ արհամարհանքից։—Ի՞նչ ունիմ վախենալու քեզանից, չէ՞ որ դու իմաստուն ու զօրաւոր ես, հետևաբար և հեղ ու ներողամիտ։ Եթէ մի բան կայ որից վախենում եմ, ենթդմնազանցութիւնն է ու ապերախտութիւնը։ Խոստացայ քեզ իմ աղջիկը, ահա առ։» Բէրթան թուլացաւ, և վհուկը, յափշտակելով երեխային ինչպէս արծիւը յափշտակում է մի թռչնակ, անյայտացաւ գիշերուան մթութեան մէջ յաղթական և ուրախութեան ձայներ արձակելով։

—

Մօր արտասուքներն ու գգուանքները չէին խանդարել փոքրիկ աղջկան խոր քունը. բայց երբ զգաց իրան վհուկի խորհրդաւոր կուրծքի վրայ, սկսաւ երազել, շփոթուել ու դանդաղուել, և երբ վհուկը անտառի խորքերը հասաւ, երեխան ահից զարթնեցաւ և այնպիսի սուր աղաղակներ արձակեց որ Զիլլան ստիպուեցաւ իւր գգուանքներով խեղդել նոցա որ Հէրմանի ու Բէրթայի ականջին չհասնեն։

—

Բայց որքան զգվում էր երեխային, այնքան աւելի նա տագնապի մէջ էր ընկնում, յուսահատաբար ոլորվում էր և իրան միակ ծանօթ բառը աղաղակում էր մօրը կանչելու համար։ Զիլլան վազելով գնալով բարձրացաւ սարը, կարծելով որ իւր արագընթացութեամբը կը թմրեցնէ ու կը քնեցնէ փոքրիկ արարածին։ Երբ Ջրվէժի մօտ հասաւ, երեխան աղաղակներից ու լացից յոգնած՝ կարծես մեռած էր։ Զիլլան կենդանացրեց նորան մի քաղցր եղանակով որ սոխակների նախանձը չարժեց՝ այնու ամենայնիւ չը կարողացաւ դադարեցնել այն ցաւալի հառաչանքները որ կարծես պատառում էին երեխայի կուրծքը։

—

Եւ երգելիս Զիլլան խորհում էր սիրոյ գաղտնիքի վրայ որի սերմերը պահվում էին այդ փոքրիկ էակի կրծքում որ դատել, ման գալ ու խօսել չգիտէր, բայց արդէն գիտեր սիրել, ափսոսալ, ցանկալ ու վշտանալ։ «Ի՞նչ ասում էր վհուկը ինքն իրան, միթէ չպիտի կարողանամ յաղթել այս բարոյական ընդդիմութեանը որ զեռ ինքնաճանաչութիւնից զուրկ է։» Այս ասելով նա փոխեց եղանակը, և այն անխօս լեզուով որով Որփէոսը երգել երբեմն քնարի վրայ վագրներին ու ժայռերին, նա կարծեց թէ կ՚ընկճի երեխայի հոգին՝ աստուածային երազներ բերելով նորա վրայ։

—

Այս երգը այնքան գեղեցիկ էր որ լերան շոճերը արմատից մինչև կատարը խշխշացին, և ժայռերը խուլ թնդիւններ արձակեցին. բայց երեխան չմխիթարուեցաւ և շարունակեց իւր հեծեծանքները։ Զիլլան հրաւիրեց լուսնի գիւթական ազդեցութիւնը. բայց գիշերային աստղի գունատ դէմքը զարհուրեցրեց երեխային, և վհուկը ստիպուեցաւ խնդրել լուսնին որ թ

աչքերը հեռացնէ Նորանից։ Ջրվէժը, ձանձրանալով երեխայի աղաղակներից, սկսաւ կատաղաբար մռնչել. բայց երեխայի սուր ձայները կռվում էին Ջրվէժի որոտումների դէմ։

—

Այս յամառ յուսահատութիւնը կամաց կամաց յաղթեց Զիլլայի համբերութեանն ու կամքին։ Այս մանկական լաց ու գոռոցի մէջ կարծես մի աւելի զօրաւոր բան կար քան բոլոր դիւթութիւնների մէջ, աւելի սաստկանչիւն ձայն քան բնութեան բոլոր ձայները։ Զիլլան երևակայեց թէ հովտի խորքում, խիտ անտառների ու խոր հեղեղների միջով, Բէրթան լսում էր իւր դստեր լացն ու գոռոցը և մեղադրում էր վհուկին թէ չէ սիրում Նորան։ Բարկութեան կայծը երևեցաւ Զիլլայի ճակատի վրայ, մի ջղային սարսուռ շարժեց Նորա անդամները. նա կանգնեցաւ անդունդի վրայ։

—

«Որովհետև այս անմիտ էակը մերժում է ինձ իւր սէրը, մտածում էր նա, ինչի համար յանձն առի այս տանջանքը, այս կենդանի յանդիմանութիւնը որ լցնում է երկինքն ու երկիրը։ Եթէ այս սիրոյ ցանկութեամբ միշտ պիտի այրուիմ, միակ դեղը կը լինէր ոչնչացնել իմ ցաւի պատճառը։ Եւ ինչ կոյր պատճառ. այս երեխան որ դեռ նոր է զարթում ապրելու համար, արդէն հոգի ունի, և եթէ մարդկանց հոգին չէ մեռնում, միթէ Նորան մարմնից բաժանելը նշանակում է վնասել Նորան։»

—

Նա մեկնեց իւր երկու բազուկները անդունդի վրայ, և երեխան, Ջրվէժի դժոխային ուրախութիւնից զգալով ահաւոր վտանգը, այնպիսի սուր աղաղակ արձակեց որ մի սուր կարծես ցցուեցաւ վհուկի սառն սրտի մէջ։ Բուռն զօրութեամբ սեղմեց Նորան կուրծքին և այնպիսի ջերմ ու մարդկային համբոյր տուեց Նորան որ երեխան զգաց մայրական սէրը, հանդարտուեցաւ և քուն մտաւ ժպիտը շրթունքների վրայ։ Զիլլան զմայլած նայում էր Նորան՝ հանդարտութեամբ տարածելով իւր ծնկների վրայ։ Այդ միջոցին արդէն առաւօտեան արշալոյսը սկսում էր ծագել։

—

Վհուկի հոգին կերպարանափոխվում էր լերան կողերի վրայ ցրուած ամպերի նման։ Նորա անշարժ կամքը ձիւնի պէս հալվում էր, Նորա իշխելու կարիքը դիւերուան մթութեան պէս անյայտանում էր։ Մի նոր լոյս, արշալոյսից պարզ, թափանցում էր Նորա ուղեղի մէջ. զեփիւռից մեղմ ներդաշնակցութիւններ հնչում էին Նորա ականջներում։ Նա մտածում էր հեղ Բէրթայի մօտ և զգում էր թէ ինքն էլ հեղ է դառնում։ Երբ երեխան հանգստացաւ, Զիլլան թեքուեցաւ Նորա վարդագոյն շրթունքների վրայ, ստացաւ մի համբոյր և ուրախ ու բաղդաւոր վերադարձաւ դէպի Հերմանի ու Բէրթայի բնակարանը։

—

«Ահա ձեր աղջիկը, ասաց նոցա. ես կամեցայ փորձել ձեր բարեկամութիւնը։ Ցետ առէք ձեր գանձը, այսուհետև գիտեմ գնահատել Նորան։ Հաստատում եմ նոյնպէս մօր վիշտը և քո իրաւունքը, Հերման։ Մարդը որ ծառայեցնում ու կողոպտում է երկիրը, հնազանդանում է հայրական նախատեսութեան. Նորա աշխատութեան վախճանը մահ է, բայց Նորա քաղցր փոխարէնը սէրն է կենդանութեան ժամանակ։ Ես կը վիրաւորեի երկնային ու երկրային արդարութիւնը, եթէ կամենայի միևնոյն ժամանակ և սէր ունենալ և անմահութիւն։

—

Եւ իսկոյն հեռացաւ նոցանից որ ականատես չլինի նոցա ուրախութեանը և վերադարձաւ դէպի իւր առանձնութիւնը, ուր ամբողջ օրը արտասուեց։ Հեռուից լսեց նա իւր ընկերուհիների աղմկալի ժողովը որոնք դեռ չարժվում էին նուիրական օթևանի գագաթների վրայ. բայց այդ բոլորը էլ չէին շարժում Նորա հետաքրքրութիւնը։ Անմահների հպարտութիւնը էլ տեղ չէր գտնում Նորա սրտում, որ մարդկային անմեղ թուլութիւնների ազդեցութեան ներքոյ կակղել, իւր սառնութիւնը կորցրել էր։ Նա հասկանում էր որ իւր ազնիւ քոյրերին երբէք չէր սիրել և թէ մի փոքր երեխայի համբոյրը աւելի քաղցր էր եղել իւր համար քան բոլոր փառքերը։

—

Այն օրուան, որի նմանը չէր տեսել Զիլլան իւր երկարատև կեանքում, հետևեցաւ մի մռայլ գիշեր. երկինքը ծածկուած էր թուխ ամպերով։ Լուսինը ծագեցաւ առանձնացած ապառաժների ետևից, բայց շուտով քօղարկուեցաւ ամպերով և մի աղօտ ու տխուր լոյս սփռեց լերան խոռոչների կանաչագոյն կողերի վրայ։ Տխրադէմ ու պղտոր լճակի ափին այստեղ ու այնտեղ երևում էին կրակներ և խառնակ խմբեր։ Զիլլան նշմարեց մի լուսեղէն պսակ, նա ճանաչեց թագուհուն որ բաղմած էր մատաղահա վհուկների խմբի մէջ. սոքա կարծես մի վերջին յարգանք էին մատուցանում իրանց թագուհուն, որովհետև կամաց կամաց հեռանում էին և մենակ էին թողնում Նորան։

—

Նոքա գնում միանում էին ուրիշ անորոշ խմբերի հետ որոնք երբեմն չատանում ու փայլում էին մի կարմրափայլ լուսով դիշերուան մթութեան մէջ, երբեմն նուազում կամ անյայտանում էին թափառական խմբերի մէջ։ Մի քանի պարեր նշմարուեցան լճի ափին, մի քանի կայծեր ցայտեցան եղէգների միջից, բայց բոլորը լռութեամբ կատարուեցաւ. ոչ մի զարհուրելի կամ վսեմ երգ չհնչեց այս խորհրդաւոր կերպարանափոխութիւնների ժամանակ, և Զիլլան ապշած մնաց տեսնելով այս ծէսերը, որոնք անծանօթ էին Նորան։

—

Նա յիշեց որ այդ բոլոր բաղմութեան մէջ մի էակ կայ միայն որին սիրում է, և այդ էակը թագուհին է, որ երբէք իւր հեղութիւնը չէր կորց-

բել։ Նա կամեցաւ իմանալ Թագուհու տուած պատուէրները, նորան լսի չուրջը. բայց Թանձր խաւարը տարածուել էր, և Զիլլան ստիպուեցաւ մի բարձրաձայն աղաղակով իւր ներկայութիւնը յայտնել քոյրերին։ Այս աղաղակը, որին հազարաւոր ձայներ սովորութիւն ունէին պատասխանել, անյայտացաւ լռութեան մէջ, և Զիլլան զգալով որ մի մեծ արկած տակնուվրայ պիտի արած լինի վհուկների դիւերային ժողովները, զարհուրեցաւ ու տխրեցաւ։

—

Դարձեալ աղաղակեց նա մի անհաստատ ձայնով, բայց չկարողացաւ արտասանել նուիրական բառերը. վհուկների ծէսերը ընկել էին նորա յիշողութիւնից։ Այդ միջոցին նա տեսաւ Թագուհուն իւր մօտ կանգնած։ «Ամենայն ինչ կատարեալ է, Զիլլա. այլևս Թագուհի չեմ։ Իմ ժողովուրդը ցրվում ու Թողնում է ինձ. տես...» Լուսինը, որ այդ րոպէին իւր գլուխը դուրս էր բերում Թուխ ամպերի միջից, ցոյց տուեց Զիլլային երկար շարժուն կարգեր որոնք մառախուղի մէջ անյայտացող սարերի վրայ էին բարձրանում և իրանք էլ ցնորական երազների պէս անյայտանում էին։

—

Հիւսիսային կողմը պառաւ վհուկներն էին գնում, սև մրջիւնների բազմութիւն որ կպչում էին ժայռերին, և այնպէս խիտ էին որ նոցա անզգալի շարժողութիւնը չէր նշմարվում։ Դոքա փախչում էին մարդու հարեւանութիւնից, որ նոցա թշնամին է, և գնում էին սառուցեալ բևեռներում որոնելու անսահման անապատ և անդարձ միայնութիւնը։ Հարաւային կողմը շնչասպառ վազվզում էին մատաղահաս վհուկները, ցիր ու ցան եղած, ոչինչ արգելքի վրայ ուշք չդարձնելով՝ այնպէս էին շտապում որ կարծես երկինքն էին բարձրանալու։ Սոքա կամենում էին մի անմարդաբնակ կղզի արևակէզ երկրներում և աշխարհի ամէն կողմերից գողացած մանուկները այնտեղ բնակեցնել

—

Արևելեան և արևմտեան կողմերը ուրիշ զանազան հասակի ու ձրգտումների տէր խմբեր կամենում էին խառնուիլ մարդկային ցեղի հետ, ուսուցանել նորան խորհրդաւոր գիտութիւնը, ուղղել նորա թիւր կարծիքները, պատժել նորան իւր մոլութիւնների համար կամ վարձատրել յառաջադիմութիւնների համար։ «Ցնորում ես, ասաց Թագուհին Զիլլային, որ բոլորն էլ մի ցնորական երազի ետեից են գնում։ Զանձրութիւնից յոգնած՝ նոքա աշխատում են կրկին ձեռք բերել իշխանութիւնն ու գործունէութիւնը որ կորցնելու վրայ են։ Պառաւները կարծում են թէ յաւիտեան փախչում են մարդուց. նոքա չարաչար խաբվում են. մարդը ամէն տեղ կը հասնի նոցա ետեից և կը գահավիժէ նոցա մինչև այն առանձնութեան մէջ ուր արեգակը մայր է մտնում։

—

«Երիտասարդները պարծենում են թէ բոլոր ցեղերի խառնուրդից մի նոր ցեղ կը կազմեն, և մարդկութեան օրէնքներն ու ձգտումները կը փոփոխեն մի այնպիսի երկրի վրայ որ դեռ կայս է։ Դոքա էլ իրանց նպատակին չեն հասնիլ. մարդը միայն մարդով պիտի կառավարուի ու աղնուանայ. և միւսները, նոքա որ մարդուն ընդունելով այնպէս ինչպէս որ կայ, պարծենում են թէ կը փոփոխեն նորա ստեղծած ընկերական պայմանները, խաբվում են մի անմիտ փառասիրութեամբ։ Բաղաքակիրթ մարդը միայն ինքն իրան է հաւատում, և գաղտնի զօրութիւնները միայն ապուշներին են կառավարում։

—

«Այս բոլոր ճշմարտութիւնները մէկ մէկ ասացի նոցա, Զիլլա։ Կամեցայ ապացուցանել որ անմահանալով՝ մենք անընդունակ դարձանք բարութիւն գործելու, և թէ բաժակը ըմպելուց առաջ՝ մենք աւելի օգտակար էինք եղել մեր մարդկային կեանքի կարճատև շրջանում քան հազար տարի չարունակ հակառակելով ընդհանուր օրէնքին։ Նոքա չկամեցան խօսքիս հաւատ ընծայել, և պնդում էին թէ կարող են և պէտք է մարդու հետ մանակից լինին երկրի կառավարութեանը, նորա կամքի հակառակ սուրբ պահեն բնութեան նուիրական օթևանները և պաշտպանեն կենդանիների ցեղերը որ մարդը երդուել է ոչնչացնել։

—

«Նոքա մեղադրում են ինձ թէ զսպեցի նոցա ցանկութիւնները, թէ ստիպեցի նոցա յարգել մարդկային ցեղի յափշտակութիւնները, փախչել միշտ մարդու առաջից, թողնել նորան ամենագեղեցիկ անապատները, իբրև թէ նոքա որ բազմանում են իրաւունք չունենային հալածելու չէզոք ու անպտուղ էակներին։ Ի զուր ասացի նոցա թէ չունենալով ոչ կարիք, ոչ արդիւնաւոր զբաղմունք, ոչ աճեցողութիւն, նոքա կարող էին բաւականանալ մի սահմանափակ տարածութեամբ. նոքա աղմուկ բարձրացրին, ասելով թէ ոտնակոխ եմ անում իրանց ցեղի պատիւն ու հպարտութիւնը։

—

«Վերջապէս հարցրին ինձ թէ ինչ իրաւունքով եմ կառավարում իրանց, որովհետև անմահական կեանքի բաժակը տալով՝ ես չկարողացայ ցոյց տալ նոցա այդ զօրութեան գործածութիւնը, և ես ստիպուած գտնուեցայ խոստովանել թէ սխալուել էի ընծայելով նոցա այդ փառաւոր պարգևը, որի ունայնութիւնը ճանաչել և ոչնչութիւնը արհամարհել եմ։ Այն ժամանակ կատաղեցան նոքա, և բոլորն էլ Թողին հեռացան ինձանից, ոմանք գարշելով, ուրիշները ափսոսալով, և ողջն էլ զարհուրելով այն ճշմարտութիւնից՝ որից յոյս ունին ազատ պահելու իրանց։

—

«Ես այժմ, Զիլլա, ահա մենակ մնացինք... Ես կամենում եմ մնալ, այստեղ, որպէս զի փորձեմ մի գիտի գործածութիւնը որի վրայ ահա հազար տարի է աշխատում եմ։ Չեմ կամենում միանալ քո քոյրերի հետ, կամ գուցէ յոյս ունիս խաղաղ ապրելու այս առանձնութեան մէջ հսկելով

Հէրմանի գերդաստանի վրայ։—Ես կամենում եմ մնալ քեզ հետ, պատասխանեց Զիլլան. դու միայն հասկացար իմ թիւր բաղդաւորութեան ծանր ու սոսկալի հոգևարքը։ Եթէ դու չես կարող մխիթարել ինձ, գոնեա չեմ վիրաւորիլ քեզ իմ վշտերով։

—

—Լաւ մտածէ թէ ինչ ես ասում, իմ սիրելի Զիլլա։ Եթէ ոչինչ չէ կարող սփոփել քեզ, աւելի լաւ է քո քոյրերի հետ ցնորքների ետևից ընկնիս։ Ես դուցէ երկար ժամանակ չմնամ այստեղ, և շուտով դուցէ էլ չես տեսնիլ ինձ։» Զիլլան մտաբերեց որ Թագուհին ասել էր իրան մի զօրաւոր դեղի մասին ձանձրութեան դէմ, դեղ որ նա մտադիր էր գործածել, բայց չէր կամեցել յայտնել Նորա զարհուրելի գաղանիքը։ Երկար ժամանակ աղաղակեց ու պաղատեց մինչև որ Թագուհին համաձայնեցաւ տեղեկացնել Նորան այդ խորհրդաւոր գաղտնիքին. «Հետևիր ինձ,» ասաց Նորան Թագուհին։

—

Զարհուրելի օձապտոյտ ճանապարհներով որ միայն իրան յայտնի էին, Թագուհին տարաւ Զիլլային սառցակոյտի գոգը, և մտնելով մի խորշ որ լուսաւորուած էր կապտագոյն մռայլ լուսով, ցոյց տուեց Նորան սեղանաձև սառոյցի վրայ մի բաժակ որի մէջ պատրաստվում էր մի անծանօթ կարմրագոյն ըմպելի, և ասաց. «Երկար ժամանակ աշխատելով մի միջոց գտնել կենաց բաժակի տխուր ներգործութիւնը ոչնչացնելու համար, կարծեմ վերջապէս գտայ մահուան փրկարար բաժակը։ Ես կամենում եմ մեռնել, Զիլլա, որովհետև քեզանից աւելի ձանձրացած և յուսահատուած եմ։

—

«Ղռութեամբ համբերեցի և կաթիլ կաթիլ ճաշակեցի, դարերի ընթացքում, ունայն զգլուխների և խաբուած յոյսերի լեղի բաժակը. բայց վերջապէս յուսահատուեցայ, մտածելով որ մենք միայն աշխարհի հետ պիտի վերջանանք, իբրև պատիժ մեր ցոյց տուած ընդդիմութեան այն օրէնքներին որոնց ենթարկվում է նա։ Մենք երկրի վրայ որոնեցինք մեր Եդեմը, և ոչ միայն երկրի միւս բնակիչները երեսները դարձրին մեզանից, այլ նոյն իսկ երկիրն ասաց մեզ. «Ես ձերը չեմ, այլ դուք իմն էք յաւիտեան, և իմ վերջին օրը ձերն էլ կը լինի։»

—

«Զիլլա, տեսայ ոչնչութիւնը առաջիս կանգնած, և դարերի անդունդը որ բաժանում է մեզ Նորանից մի վայրկեանի պէս երևեցաւ ինձ յաւիտենականութեան մէջ։ Այն ժամանակ երկիւղ կրեցի ճակատագրական մահից և ջերմեռանդութեամբ պաղատեցի կենաց Տիրոջ որ երկրին ենթարկէ ինձ բնական մահուան փրկարար օրէնքին։—Չեմ հասկանում քեզ, պատասխանեց Զիլլան, ահից գունաթափուած. միթէ երկու տեսակ մահ կայ, և արդեօք ցանկանում ես մարդկանց մահով մեռնիլ։—Այո, ցանկանում եմ, Զիլլա,

աշխատում եմ, փորձում եմ, և յուսամ թէ վերջապէս արտասուքներս ողողեցին Նորան որի առաջ խրոխտացել ենք։

—

—Եւ կենաց Տէրը ներել է քեզ քո ապստամբութիւնը, խոստացել է քեզ թէ հոգիդ այդ մահից յետոյ պիտի ապրի։—Կենաց Տէրը ոչինչ չէ խոստացել ինձ։ Նա ցոյց տուեց ինձ այս խօսքը աստղալից երկնքի վրայ. «Մահը յոյս է։—Սպասենք ուրեմն մոլորակի մահուան. չէ որ նա էլ մի և նոյն խոստմամբ պիտի մեռնի։—Այո, որովհետև նա իւր կոչմանը հաւատարիմ է մնացել. իսկ մենք որ մարդկային կոչման չհաւանեցանք ու ազատուեցանք Նորանից, իրաւունք չունինք տիեզերական վերանորոգութեան սպասելու։

—

«Այժմ, մնաս բարեաւ, իմ սիրելի Զիլլա. ես այստեղ պիտի մնամ քաւութեան պատրաստուելու համար։ Վերադարձիր լոյս աշխարհը, և եթէ չես կարող վիշտդ մոռանալ, եկ մասնակից եղիր իմ վիճակին։—Ցոյս ունիմ, ասաց Զիլլան, որ քո թոյնը անզօր կը լինի. բայց երդուիր որ այդ զարհուրելի փորձը չես անիլ առանց ինձ քեզ մօտ կանչելու։» Թագուհին երդուեց, և Զիլլան հեռացաւ սառցակոյտից . նա շտապում էր տեսնել արեգակը, ազատ ջրերը, թափառող ամպերը և սիրուն ծաղիկները։ Նա դեռևս սիրում էր բնութիւնը և զմայլում էր Նորա գեղեցկութեամբ։

—

Շտապելով գնաց նա Հէրմանի բնակարանը, որպէս զի սովորի Նորա երջանկութեանը ականատես լինել. բայց յուսահատ դրութեան մէջ գտաւ Նորան։ Բէրթան հիւանդացել էր. աղջկայ յափշտակութիւնը այնպիսի վիշտ էր պատճառել Նորան որ արիւնը բորբոքուել էր։ Նա ցնորքների մէջ էր և աղաղակելով անդադար պահանջում էր իւր երեխային որին պիտի սեղմում էր իւր բազուկների մէջ առանց ճանաչելու Նորան։ Զիլլան վազեց բերաւ առողջարար բոյսեր և բժշկեց մատաղահաս կնոջ հիւանդութիւնը։ Խրճիթը կրկին լցուեցաւ ուրախութեամբ. բայց Զիլլան մնաց ամօթահար և տխուր դրութեան մէջ, որովհետև ինքն էր մոցրել ցաւը այդ բաղդաւոր գերդաստանի մէջ։

—

Նա կարծեց թէ Բոնուսի վրայ նոյնպէս ներգործել էր փոքրիկ երեխայի անցքը և մօր հիւանդութիւնը. ծերունի դաստիարակը համարեա չէր կարող քայլել։ «Նա հիւանդ չէ, ասաց Նորան Հէրմանը. նա ոչինչ վիշտ չէ ունեցել, մեր վիշտն էլ Նորան անհասկանալի է եղել։ Նորա միակ ցաւը ծերութիւնն է. ոչ քնած է, ոչ արթուն, այլ շարունակ երազների մէջ է։ Մենք կարծում ենք թէ նա կը մեռնի, և ամէն հնարք գործ դրինք Նորա կեանքի թելը երկարացնելու. բայց իզուր։—Ուրեմն դուք ցանկանում էք որ չմեռնի, ասաց Զիլլան։

—

—Մենք անկարելին չենք ցանկանում, պատասխանեց Հէրմանը։ Ցաւում ենք միայն մեր ալեոր ընկերի վրայ և որքան կարելի է կ՚երկարացնենք այն օրերը որ մնում են նորան մեզ հետ անցկացնելու. բայց մենք հպատակում ենք այն օրէնքին որ սահմանել է կենաց Տէրը։ Զիլլան մօտեցաւ ծերունուն և հարցրեց թէ կամենում է արդեօք որ փորձէ տալ նորան առաջուայ ոյժը։ Բօնուսը ծիծաղեցաւ և չնորհակալ եղաւ նորան երեխայական ձևերով։ «Բաւական լաւութիւններ արիք ինձ, ասաց նա, և ամենից առաջ անտանելի տանջանքներից փրկեցիք. յետոյ ձեր չնորհքով ապրել եմ երկար ու խաղաղ տարիներ, և անիրաւ բան կը լինէր սորանից աւելի պահանջել։»

—

Միւս անգամ երբ վհուկն եկաւ տեսնելու ծերունուն, նա փոքր ինչ ցաւ էր զգում և թոյլ կերպով դանդատում էր. «Դժուարութիւն եմ կրում մեռնելու, ասաց նա։—Կարող ես վախճանդ չտապեցնել, պատասխանեց վհուկը, ինչի՞ ես սպասում մահուան, եթէ նորա գալուստը անխուսափելի է։» Բօնուսը դարձեալ ժպաց. «կեանքը քաղցր է մինչև վերջին շունչը, տիկին վհուկ, և բանականութիւնը, համաձայն Աստծու կամքին, արգելում է մեզ նորա թելը կտրել։—Եւ յետոյ. ինչ յոյս ունիս գտնելու կեանքի այն կողմը։—Շուտով կ՚իմանամ, ասաց հոգեվարք ծերունին։»

—

Եւ լապտերի աղօտ լուսոյ պէս հանգաւ նա Զիլլայի աչքի առաջ։ Հէրմանն ու Բէրթան մօտ բերին իրանց երեխանց մի համբոյր տալու նորա փղոսկրէ ճակատին։ «Այդ ինչ էք անում, ասաց վհուկը։—Ցարդանք ենք մատուցանում մահուան, պատասխանեց Բէրթան, և օրհնում ենք մարմնից բաժանուող հոգին։—Եւ ո՞ւր է գնում նա, հարցրեց դարձեալ վհուկը յուզուած։—Աստուած գիտէ, պատասխանեց կինը։—Բայց միթէ ոչինչ երկիւղ չունիք ձեր բարեկամի հոգու համար։—Ինձ ուսուցին յուսալ։—Իսկ դո՞ւ, Հէրման։—Դու ոչինչ չասացիր ինձ այդ մասին, պատասխանեց նա. բայց Բէրթան յոյս ունի, և ես հանգիստ եմ։»

—

Զիլլան հասկացաւ այս բնական մահուան քաղցրութիւնը բնական կեանքի վախճանից յետոյ. իսկ բռնի մահը, յանկարծական մահը, երիտասարդի ու զօրաւորի մահը, ո՜հ, նա սարսափում էր այդպիսի մահից, ցանկացաւ Թագուհու հետ խորհրդակցել։ Սակայն Թագուհին չէր երևում և Զիլլան, չէր համարձակում վերադառնալ այն զարհուրելի տեղերը։ Մի գիշեր Թագուհու ուրուականը եկաւ կանչեց նորան. Զիլլան հեռուեցաւ ուրուականին և գտաւ իւր մեծ բարեկամուհուն չափիղայի պատեցաւ ուրուականին և գտաւ իւր մեծ բարեկամուհուն չափիղայի պատեցաւ լատի խորքում նստած, անվրդով և ժպիտը շրթունքների վրայ։ «Զիլլա, ասաց նա, հասել է ժամը, պէտք է օգնես ինձ։

—

«Սակայն ամենից առաջ կամենում եմ յանձնել քեզ շատ գաղտնիքներ որ գտել եմ հիւանդութիւններ բժշկելու, վերքերը լաւացնելու և վշտերը մասամբ թեթևացնելու։ Այդ բոլորը կը տաս Հէրմանին, որպէս զի որքան կարելի է հեռացնէ իրանից և իւր գերդաստանից վաղաժամ մահը և անօգուտ ցաւերը։ Ասա նորան որ աշխատի գերազանցել մեզ այս գիտութեան մէջ, որովհետև մարդը ինքն իրան պիտի օգնէ և յաւիտեան պիտի կռուի։ Մարդկային չարիքը նորա անիմաստութեան պատիժն են և նորա տգիտութեան հետևանքը։

—

«Իմաստութեամբ նա կ՚ոչնչացնէ մարդասպանութիւնը. գիտութեամբ կը հեռացնէ հիւանդութիւնները։ Մնաս բարեաւ, քոյր իմ։ Մեռնելը ոչինչ է նորա համար որ լաւ է ապրել։ Իսկ ես չգիտեմ թէ ինչ տանջանք եմ պատրաստում ինձ համար, որովհետև մեծ չարագործութիւն եմ արել. բայց չպէտք է երկնչիմ իմ մեղքը քաւելուց և ցաւը կրկին ճանաչելուց։—Ուրեմն դու պիտի մեռնիս, աղաղակեց Զիլլան աչխատելով վայր ձգել ճակատագրական բաժակը։—Գիտեմ, ասաց Թագուհին, պինդ բռնելով նորան։ Գիտեմ միայն որ այս ըմպելիքով ոչնչացնում եմ կեանքի բաժակի անիծեալ զօրութիւնը։

—

«Բայց չգիտեմ մահկանացու կը դառնամ թէ կը մեռնեմ։ Գուցէ ստանամ իմ առաջուայ գոյութիւնը, այն դրութեամբ որի մէջ գտնվում էի անչարժութեան դատապարտուելուց առաջ։ Այն ժամանակ մի քանի երջանիկ օրեր կը մնան ինձ երկրի վրայ. բայց ես այդ բաղդաւոր ժամերին արժանի չեմ և չեմ էլ կարող պահանջել։ Զխաբենք մեր անձը մնոտի յոյսերով, Զիլլա։ Կաց և տես թէ ինչ վիճակի կ՚ենթարկուիմ ես. եթէ անչանամ, թող իմ դիակը այստեղ մնայ. իսկ եթէ մահուան դէմ կռուիմ, կրկնէ ականջիս այն բառը որ կարդացել եմ երկնակամարի վրայ. «Մահը ցոյս է։»

—

Կաց մի փոքր էլ, աղաղակեց Զիլլան. իսկ եթէ ես էլ կամենամ մեռնիլ։» Թագուհին տուաւ նորան մի կախարդական դեղ ասելով. «Դու ինքդ կը կարողանաս բաղադրել այս թոյնը. չեմ կամենում որ այս բաժակը խմես առանց արածիդ վրայ խորհելու։ Տուր ինձ բարեկամութեան օրհնէնքդ. հոգիս պատրաստ է։» Զիլլան չոգեցաւ Թագուհու առաջ և պաղատում էր նորան փոքր ինչ էլ սպասել, բայց Թագուհին երկնչելով որ մի գուցէ նորա արտասուքներից տկարանայ, խնդրեց Զիլլային որ գնայ մի վարդ բերէ, որպէս զի մի անգամ էլ զմայլի երկրի անարատ գեղեցկութեամբ, որից գուցէ յաւիտեան բաժանուելու էր։

—

Երբ Զիլլան յետ եկաւ, Թագուհին նստած էր մի սառոյցի վրայ, գլուխը անհոգաբար բազկի վրայ թեքած. միւս ձեռը կախ ընկած էր, դա-

տարի բաժակը գլորուել էր Նորա հագուստի փէշի վրայ։ Զիլլան կարծում էր թէ քնած է. բայց այդ քունը մահն էր։ Շատ մարդկանց մահը տեսել էր Զիլլան և երբէք չէր յուզուել, որովհետև չէր կամեցել երբէք մի մահկանացու սիրել։ Տեսնելով որ անմահը դադարել էր ապրելուց, զարհուրած ու անխօս մնաց։ Սակայն յուսալով որ այդ իսկական մահ չէր՝ այլ մի մահանման քուն, երեք օր անքուն մնաց թագուհու կողքին, սպասելով որ զարթի։

—

Բայց թագուհին չզարթեցաւ, և Զիլլան տեսաւ որ Նորա վեհ ու անխռով կերպարանքը սառեցաւ ու քարացաւ։ Ցուսահատուած փախաւ այնտեղից. բայց բարեկամութեան յիշատակը երբեմն երբեմն բերում էր Նորան այնտեղ։ Սառոյցը պահպանում էր ապականութիւնից այն գեղեցիկ մարմինը. բայց դորա փոխարէն հետզհետէ քարացնում էր թագուհու դէմքի գծագրութիւնը և արձանի էր փոխում այն կեանքի հրաշալիքը։ Զիլլան նայելով Նորա վրայ, ինքն իրան հարցնում էր թէ՝ արդեօք ապրել է նա. երբեմն վհուկը էլ չէր ճանաչում իւր բարեկամուհուն ու թագուհուն։

—

Կամաց կամաց Զիլլան սովորեցաւ անխռով տեսնել թագուհու արձանը և վճռեց հետևել իւր բարեկամուհու ճակատագրին. բայց երբ մահուան ըմպելիքը կազմեց, բաժակը սառոյցի վրայ դրաւ և զարհուրելով փախաւ այնտեղից։ Այն բոպէից որ գիտէր թէ մեռնելուց ազատ է, զգում էր կեանքի գեղեցկութիւնը և չէր ձանձրանում։ Գեղաժիժաղ գարունը որ եկել էր, առաջինն էր որ Զիլլան գնահատում էր. երբէք ծառերը չէին ունեցել այդքան վայելչութիւն, երբէք ծաղկաւէտ մարդերը չէին բուրել այդպիսի անուշահոտութիւններ։

—

Նա գնում էր կանաչի մէջ ձմեռուանից թմրած միջատները, և երբ տեսաւ որ թիթեռը դուրս է գալիս իւր պատեանից, սարսեց հարցնելով ինքն իրան թէ արդեօք այդ մահուան գրկածութիւնից բաժանուող հոգու պատկերը չէ։ Նա զգում էր որ թագուհին հրաւիրում է իրան սառուերների թագաւորութիւնը, շատ անգամ տեսնում էր Նորան երազում և հարցեր առաջարկում. բայց ուրուականը անպատասխան անցնում էր աստղերը ցոյց տալով։ Նա աշխատում էր կարդալ երկնակամարի վրայ այն խոստմունքը որ արտասանել էր իւր բարեկամուհուն. բայց ապականութեան երկիւղը խանգարում էր Նորան ըմբռնել խորհրդաւոր նշանագրերի իմաստը։

—

Նա ամէն օր տեսնում էր Բէրթային և Նորա փոքրիկ աղջկան, որին շատ էր սիրում։ Հէրմանի միւս երեխայքը գեղեցիկ էին երևում Նորան ու բարի, բայց հնորհալի ու անմեղ աղջիկը գրաւում էր Նորա բոլոր ուշադրութիւնը։ Այս երեխան շատ քնքոյշ էր և իւր հասակից բարձր խելք էր ցոյց տալիս. երբ վհուկը գրկում էր Նորան, նա սկսում էր այնպիսի բաներ խո-

սել ու ասել որ կարծես թէ մի ուրիշ աշխարհից էին գալիս։ Նա ուշադրութիւն չէր դարձնում ոչ սպիտակ դառներին ոչ գեղեցիկ ծաղիկների վրայ. այլ անդադար իւր փոքրիկ բազուկները ձգում էր դէպի ամպերը, և մի օր նա աղաղակեց երկինք բառը, որ ոչ ոք չէր ուսուցել Նորան։

—

Մի օր երեխան դունաթափուեցաւ և իւր չիկահեր գլուխը խոնարհեցրեց Զիլլայի ուսի վրայ, ու ասաց Նորան. Ե՛ն։ Վհուկը կարծեց որ զբօսանքի է հրաւիրում իրան. բայց Բէրթայի աղաղակը յայտնեց որ երեխան մեռել էր։ Զուր աշխատեց Զիլլան կենդանացնել Նորան. վհուկի բոլոր դաղտնիքները կորցրին իրանց զօրութիւնը. երեխայի հոգին թռել էր։ «Ա՛յ. չարագործ վհուկ, աղաղակեց Բէրթան անպատմելի ցաւով, գիտէի որ իմ աղջիկը պիտի մեռնի։ Այն գիշերուանից որ քեզ հետ սարի գլխին անցկացրեց, կորցրել էր նա իւր զուարթութիւնը և ուրախութիւնը։ Քո դժբաղդ սէրը սպանեց Նորան։»

—

Զիլլան ոչինչ չպատասխանեց։ Գուցէ Բէրթան սխալվում էր. բայց վհուկը զգում էր որ վշտացած մայրը էլ չի սիրել իրան։ Զուր աշխատեց Հէրմանը մեղմացնել նոցա վէրքերը։ Զիլլան դէպի սառցակոյտը։ Նա համարձակեցաւ ա՛, համբոյր տալ թագուհու անշարժ դիակին, և խմեց բաժակը. բայց փոխանակ գետնին փռուելու, զգաց որ կարծես մի վստահութեան և ուրախութեան զգացողութեամբ վերանորոգուել է, Նորան այնպէս էր թվում թէ մի մանկական ձայն ասում էր իրան. «Ե՛կ գնանք։»

—

Նա վերադարձաւ խրճիթը։ Երեխան պարկած էր մի ծաղկապսակ կողովի մէջ. մայրը աղօթում էր կողքին, շրջապատած իւր գեղեցիկ երեխանցով, որոնք աշխատում էին միխիթարել Նորան, իսկ մայրը իւր քաղցր հայեացքովը կարծես ասում էր Նոցա. «Հանգիստ եղէք, ձեզ էլ պակաս չեմ սիրիլ։» Հայրը փորում էր մի փոքրիկ փոս վարդի թփի տակ։ Խոշոր կաթիլներ թափվում էին Նորա աչքերից, բայց նա սիրով պատրաստում էր իւր զաւակի վերջին անկողինը։ Տեսնելով վհուկին՝ ասաց. «Ներէ Բէրթային։»

—

Զիլլան չողեց կնոջ առաջ. «Դու պիտի ներես ինձ, ասաց նա, որովհետև ես պիտի հետևիմ քո աղջկան։ Նա կանչեց ինձ, և անշուշտ գնումէ ապրելու մի աւելի լաւ աշխարհում, ուր Նորան մայր է հարկաւոր։ Այստեղ միայն վատութիւն արի Նորան. բայց երևում է որ ինձ վիճակուած է ուրիշ տեղ բարիք անել Նորան, որովհետև ահա կանչում է ինձ։—Չգիտեմ թէ ինչ ես կամենում ասել. պատասխանեց մայրը։ Դու խլեցիր իմ երեխայի կեանքը, այժմ կամենում ես Նորա հոգին էլ յափշտակել։—Մեր զաւակի հոգին միայն Աստծունն է, ասաց Հէրմանը. բայց եթէ Զիլլան ճանաչում է Նորա խորհրդաւոր նպատակները, թոյլ տանք Նորան։ Դրէք երեխային բազուկներիս մէջ,» ասաց վհուկը։ Եւ երբ այն փոքրիկ մարմինը սեղմեց իւր սրտի վրայ, դարձեալ լսեց որ Նորա հոգին ասում էր կամաց. «Ե՛կ գնանք։—Այո, գնանք, աղաղակեց վհուկը։ Եւ իւր շրթունքները միացնելով Նորա շրթունքներին, զգաց որ այդ մայրական համբոյրի ժամանակ իւր հոգին դուրս է թռչում, խառնվում է երեխայի անարատ հոգու հետ։ Հէրմանը գերեզմանը մեծացրեց և երկուսին միասին տեղաւորեց։ Գիշեր ժամանակ մի անտեսանելի ձեռք գերեզմանի վրայ փորագրեց այս բառերը. «Մահը յոյս է»։

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՓՈՐՁ“
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ԵՌԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

„Փորձ“ Երամսեայ Հանդիսի շրջանը լրանում է սոյն համարով: Երկրորդ շրջանի մէջ ևս „Փորձը“ պիտի հրատարակուի միևնոյն ուղղութեամբ և միևնոյն աշխատակիցների գործակցութեամբ:

«Փորձը» հրատարակվում է հետևեալ ծրագրի համեմատ բովանդակութեամբ:

Ա. ԳՐԱԿԱՆԱԿԱՆ. Այս բաժնի մէջ կը մտնեն թէ ինքնուրոյն և թէ օտար լեզուներից թարգմանած բանասիրական աշխատութիւններ՝ կեանքից առնուած նկարագրութիւններ, վէպեր, ռոմանները, դրամատիկական գրուածներ — թէ արձակ և թէ ոտանաւոր:

Բ. ՊԱՏՄԱԿԱՆ. Յօդուածներ Հայոց, Ռուսաց և ընդհանուր պատմութիւնից: Այս բաժնի մէջ կը մտնեն նաև ժամանակակից քաղաքական կեանքի տեսութիւնը:

Գ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ. Դիւրըմբռնելի ոճով գրուած զանազան յօդուածներ դիտութեան այլևայլ ճիւղերից առնուած:

Դ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ. Մանկավարժական հարցերի վերաբերեալ ընդհանուր յօդուածներ, դպրոցական գործի այժմեան դրութիւնը թէ Հայոց մէջ և թէ Ռուսաստան ու արտասահման:

Ե. ԲՆՆՈՒԹԻՒՆ և Մատենախօսութիւն Հայոց, Ռուսաց և օտար լեզուներով լոյս տեսած նշանաւոր գրքերի:

Զ. ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այս բաժնի մէջ կը տպագրուին նպատակի յօդուածներ, որոնք մեր ազգի ներկայ վիճակի քննութեանն նուիրուած, այն է՝ եկեղեցոյ, ուսումնարանաց, ուսուցչաց, ազգային լուսաւորութեան, ազգային տնտեսութեան և հասարակական անքի: Կը լինին թղթակցութիւնք ամեն հայաբնակ տեղերից, կարդրութիւնք տէրութեան և հոգևոր վարչութեան:

Է. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեսութիւն ներքին գործոց Ռուսաստանի ընդհանրապէս և Անդրկովկասի առանձնապէս: Այս բաժնի մէջ կը բովանդակին նաև թղթակցութիւնք և զանազան հաղորդութիւնք Ռուսաստանի և Կովկասի կեանքի մասին:

Ը. ԱՅԼԵՒԱՅԼՔ: Ամեն տեսակ լուրեր:

Թ. Յայտարարութիւններ տեղական և եւրոպական լեզուներով:

Փորձի բաժանորդագինը ամենայն տեղ տասը մանէթ է:

Յորդորուիլ կարելի է Տփխիսումը՝ «Փորձի» խմբագրատանը, Հ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութումը և Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցում: Օտար քաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ հասցէով — Тифлисъ. Въ Редакцію Армянскаго Журнала „ПОРДЗЪ“. իսկ արտասահմանից — Tiflis. Redaction du Journal Arménien “PORDZ„

ԽՄԲԱԳԻՐ - ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

«ՓՈՐՁ» ՀԱՆԴԻՍԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

I. ԴՕՆ ԿԱՐԼՈՍ. գործ Շիլլերի—թարգմ. Գ. Բարխուդարեանց.
II. ԿԱՐԱՊԵՏ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ. կենսագրութիւն. Յ. Գեղամեանց.
III. ՋԻՈՒԶԷՊՊԷ ՄԱՋՋԻՆԻ. գործ Լ. Ասսինգ.
IV. ՅՈՅՍ. բանաստեղծութիւն, Գ. Բարխուդարեանց.
V. ՖՐԱՆԿԼԻՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ. հրապարակախօսութիւն. Է. Լաբուլէի.
VI. ՍԿԶԲՈՒՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ըստ Հէրբարտի. Ս. Մանդինեանց.
VII. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. Մէլիքզադէ.
VIII ԼԱ ՐԱԲԲԻԱՏԱ. վէպ, Պաուլ Հէյզէի, թարգ. Գ. Բարխուդարեանց.
IX ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ. Գ. Զմչկեանց.
X. ՎԱՐԴՈՒՀԻ (Եղելութիւն). Տ. Սրբուհի Երիցեանց.
XI. ԵՐԿՈՒ ԲԱՆԱՅՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՄԻԵԼԼԷՐԻՑ ԵՒ ՈՒԼԱՆԴԻՑ. թարգմ. Գ. Բարխուդարեանց.
XII. ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՈՅԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ. պատմական տեսութիւն. Ա. Երիցեանց.
XIII. ԵՒՐՈՊԱՅՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԵՏ. Ս. Պալասանեան.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XIV. Հայոց Ազգը և իւր եկեղեցին.
XV. Քանի մի առաջարկութիւն.
XVI. Ղամակ Ախալցխայից.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XVII. Տաճկաստանի ապստամբութիւնները.
XVIII. Նուբար փաշա և Եգիպտոս. գործ Շէֆլինգէրի.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

XIX. М. Міансаровъ Bibliographia Caucasica et Transcoucasica.
XX. Հոֆֆման. Յակոբ Էրլիխ. թարգ. Քալանթարեանի.
XXI. Յայտարարութիւններ.

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

I. ԴՕՆ ԿԱՐԼՈՍ, գործ Շիլլերի, թարգմ. Գ. Բարխուդարեանց.
II. ՄԻ ՀԱՑԵԱՑՔ ՀԱՑՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎՐԱՑ, Ս. Պալասանեան.
III. ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՑՈՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ, պատմական տեսութիւն. Ա. Երիցեանց.
IV. ԿՐԹՈՒԹԻՒՆՆ ԱՄԵՐԻԿԱՑՈՒՄ, գործ Է. Լաբուլէի.
V. ԵՐԵՔ ՈՏԱՆԱՒՈՐ, Պէտէօֆի հունգարացի բանաստեղծից. թարգ. Գ. Բարխուդարեանց.
VI. ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆ, Ս. Պալասանեան.
VII. ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ, Գ. Զմշկեանց.
VIII. ԼՈՒՂՈՐԴ, բանաստեղծութիւն Շիլլերի, թարգ. Գ. Բարխուդարեանց.
IX. ՔՈՒՐԴԻ ԼԵԱՌՆ, գործ Ալբէր Այնօի

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

X. ՄԱՆԱՆԱՑ, ժողովեաց և լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց. ՄԻՆԱՍ ՁԵՐԱՋ, ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ. ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ, երկասիրեաց Խրիմեան Հայրիկ. ԱՆԵԿԴՕՏՆԵՐ, աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց. ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄՕԼԻԷՐԻ. Գրիչ.
XI. ԱՐԵՒԵԼԱԳԷՏՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ (նամակ Ս. Պետերբուրգից). Ա. Երիցեան.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XII. Թէ ինչ միջոցների է կարօտ մեր ժողովրդի բարեկեցութիւնը.
XIII. Թիֆլիսի շրջակայ գիւղերի մասին.
XIV. Գուգարաց Աշխարհ, (ճանապարհորդական տպաւորութիւնք).

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XV. Սլավօնա-Տաճկական պատերազմը.

ՑԱՒԵԼՈՒԱԾ

XVI. Նախագիծ Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցի.
XVII. Ցայտարարութիւններ.

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

I ՕՐԼԷԱՆԻ ԿՈՑՍԸ, գործ Շիլլերի. Գ. Բարխուդարեանց.
II ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, կենսագրութիւն. Ց. Գեղամեանց.
III ՊԱՆԴՈՒԽՏ ՎԱՆՑԻՆ, պատկեր գաղթակ. մշակների կեանքից. Գրիչ.
IV ՄՇԵՑՈՒ ՀԵԿԵԿԱՆՔԸ, ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ, ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՃ. Գամառ-Քաթիպա.
V ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՑՈՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ, պատմական տեսութիւն. Ա. Երիցեանց.
VI ԵՐԵՔ ԶՐՈՑՑ, Ալֆոնս Դոդէից
VII ԲՈՂՈՔ ԱՌ ԵՒՐՈՊԱ. Գամառ-Քաթիպա.
VIII ԱԶԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ, պրոֆեսոր Զիգֆրիդ Բրի.
IX ՀԱՑԻ ԴԱՆԴԱՏԸ, ՁԱՑՆ ԲԱՐԲԱՌՈՑ ՑԱՆԱՊԱՏԻ, ՎԱՆԵՑՈՑ ՀԱՑՐՄԵՐԸ. Գամառ-Քաթիպա.
X ԱԶԳԵՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ. Ս. Պալասանեան
XI ՂԱՐԻԲ ՄՇԵՑԻ, ՎԱՆԵՑՈՑ ԱՂՕԹՔԸ, ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ. Գամառ-Քաթիպա.

XII ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ. Գ. Զմշկեանց.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

XIII ԺՕՐԺ ՍԱՆ և նորա վէպերի հայ թարգմանութիւնները. Գրիչ.
XIV ՊԱՆԴՈՒԽՏ ՎԱՆՑԻՆ, գրեց Արիստակէս վարդ. Տէր-Սարգսեան. Գրիչ.
XV ASSISES D'ANTIOCHE. Ս. Մանուէլ Անանեան.
XVI ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ, հեղինակ. Հեկտոր Ժորժի, թարգմ. Ս. Լիմէքճեան. Գրիչ.
XVII РУССКО АРМЯНСКІЙ СЛОВАРЬ сост. Г. Ирицуховъ. Գրիչ

XVIII ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XIX Մեր հոգևորականութեան պարտականութիւնները.
XX Ո՞ւմն է պատկանում գերագոյն իշխանութիւնը Հայոց եկեղեցու կառավարութեան մէջ.
XXI Ճանապարհորդական նկատողութիւնք. Քաջբերունի.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XXII Արևելեան խնդիրը.

ՑԱՒԵԼՈՒԱԾ

XXIII Նօնցայի բերդը, գործ Գվերացիի, թարգմ. Փ. Վարդանեան.
XXIV Օսմանեան Սահմանադրութիւնը.
XXV Ցայտարարութիւններ.

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ

I ՕՐԼԷԱՆԻ ԿՈՑՍԸ, գործ Շիլլերի. Գ. Բարխուդարեանց.
II ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ. Ս. Պալասանեան.
III ՆԵՐՍԷՍ Ե-Ի ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆԸ. Ա. Երիցեան.
IV ԻՄ ԾԱՆՕՐՈՒԹԻՒՆԸ Պ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ՀԵՏ. Տ. Սրբուհի Երիցեան.
V ՀԱԶԱՐԷՆ ՄԷԿԸ, ԱՆՎԵՐՋ ԳԱՆԴԱՏՆԵՐ. Գամառ-Քաթիպա.
VI ՁՈՐՍ ՕՐ ԺԱՆ ԳՈՒՐԴՕՆԻ ԿԵԱՆՔԻՑ, գործ Էմիլ Զօլայի.
VII ԵՐԵՔ ՍՐՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (Պէտէօֆի). Գ. Բարխուդարեանց
VIII ՎԵԱՉԷՍԼԱՎ ՀԱՆԿԱ, կենսագրութիւն.
IX ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՑՈՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ, պատմական տեսութիւն Ա. Երիցեան.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

X ԱՆԱՆԻԱՑԻ ՇԻՐԱԿՈՒՆԻՈՑ Մնացորդք Բանից, Գրիչ
XI АРМЯНСКАЯ ГЕОГРАФІЯ VII ВѢКА ПО Р. Х. (приписывавшаяся Моисею Хоренскому.) Ф. Պատկանեան. Գրիչ.
XII ԳԷՆԷԶԻՈՍ Հայազգի Բիւզանդական պատմագիր. Ս. Մ. Անանեան
XIII ՄԱՑԻՐՆԻ ԼԵԶՈՒ ՏԷՐ Ղևոնդեանի. Ս. Մանդինեան.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XIV Ազգային Հնութիւններ, Արարատեան ընկերութիւն.
XV Ճանապարհորդական նկատողութիւնք. Քաջբերունի.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XVI Արևելեան պատերազմը.

ՑԱՒԻԼՈՒՅՑ

XVII ԲԱԺԱԿ. Կախարդական վէպ, գործ Ժորժ Սանդի.
XVIII Յայտարարութիւններ.

ՏԱՐՐԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ

ԸՍՏ ԿՐԻԻԳԷՐԻ

84 առանձին տպուած նկարներով

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ (Ե)

Ծախվում է պ. Զ. Գրիգորեանցի և ընկ. գրավաճառանոցում:

Այս դասագիրքը իւր համառօտ պարունակութեամբը և պարզ ու դիւրըմբռնելի ոճովը շատ յարմար է մեր ազգային դպրոցների ներկայ պահանջին: Գինը նշանակած է 60 կոպէկ, բայց դպրոցներին 20% զիջումն լը կինի, եթէ միանգամից դնեն 20 և աւելի օրինակ:

Լոյս տեսաւ և վաճառւում է Ֆրանց Հոֆման Գերմանացու «Հաւատարմութիւնը ամեն արդելքներին յաղթում է» անունով վէպի հայ թարգմանութիւնը Յարութիւն Առաքելեանցի աշխատութեամբ: Գինն է փոստի ծախսով 40 կոպէկ:

Գնել ցանկացողները կարող են դիմել

Թիֆլիսում՝ Պ. Զաք. Գրիգորեանցի և ընկ. Գրավաճառանոցը, Եազօր Յարութիւնեանցի թէյի խանութը (Սիօնի հանդէպ) և թարգմանողին Դերսիսեան Դպրոցում:

Բաքուում՝ Պ. Գէորգ Ա. Գրիգորեանցին:

Շուշի՝ Հայր Արիստակէս վարդապետ Սեղրակեանցին:

Երեւան՝ Վարոս Աստվածեանցի խանութը:

Ծախւում է նոյնպէս զանազան հայաբնակ քաղաքներում՝ հոգեւոր դպրոցների ուսուցիչների մօտ:

Յիշեալ գրքի թարգմանողը պատրաստի ունի տպագրութեան համար նոյն Ֆրանց Հոֆմանի «Խաւարից դէպի լոյս» վերնագրով վէպը, որ շուտով մամուլի տակ կմտնի:

Дозволено цензурою. Тифлисъ. 3 мая 1877 г.
Типогр. А. Эпфіаджіанцъ и К-°.

1974

2013